ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ —ԹԻՒ 3742 1884 ՆՈՅԵՄԲԵՐ 3

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· *Քաղաքական կուսակցութիւններն Յեւրոպա և Յամերիկա* (Դ· և վերջին).— ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԷ ..... Բ· ՔԷՉԵԱՆ
ՀԱՆԳԻՍՏ Տ· Տ· ՆԵՐՍԻՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Կ· ՊՈԼՍՈՅ .....
Վ.Է.Պ· *Մատլէնի մեղքը* (վերջ)· (ԲՕԼ ԱԼՊԱՆ) *Թարգմանութիւն* .....
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ· *Արտաքին, Ներքին, Ազգային* .....
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ· (ԿԶԱՎԻՒ ՏԸ ՄՕՆԹԷԲԼԷՆ) *Թարգմ.* ..... Մ· ԶՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ· Պոլիս եւ գաւառներու —տարեկան ..... Կէս ոսկի Օսման·
» » վեցամսեայ ..... Քառ. » »
Մէկ թերթին գինն է ..... 60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան ..... 12 ֆրանք
» » վեցամսեայ ..... 6 »
Թղթատարութեան ծախք տարեկան ..... Դահեկ. արծ. 15
Վեցամսեայ ..... » » 7½

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Գալաթիա, Նորատունկեան խան

Կ· ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ԳԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Գալաթիա, 2 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	.....	110
3 » » » (վճռելիկն)	.....	109 3/4
» Բարիզի » (պանքայի)	.....	22 90
» » » (վճռելիկն)	.....	22 97 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քոնսոլիտէ

Երեկ երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) դէկն	....	8 31 1/2
Պօրսային գոցուելէն վերջը » »	...	8 31 1/2
Բերայի մէջ » »	...	—
Առաւօտուն բացուեցաւ » »	...	8 32
Բարձրագոյն գին » »	...	8 32 1/2
Նուազագոյն » »	...	8 32
Կէս օրին » »	...	8 32 1/2
Իւնիֆիէ Եգիպտական	.....	72 5
Երեկ իրիկուն գոցուեցաւ	.....	73 10
Բերայի մէջ	.....	—
Այս առաւու բացուեցաւ	.....	73
Կէս օրին	.....	73
Հէվալէսիզ	.....	12 1/2
Բէբօր գոնսոլիտէի	.....	—
» իւնիֆիէի	.....	—
Փոխառութիւն 1863 (Գ. Կ.)	.....Ֆր. ...	72
» 1865 »	..... » ...	55 50
» 1869 »	..... » ...	49
» 1873 »	..... » ...	43
Պոն տիւ Թրէզօր	.....Անգլ. Լ.	20 50
Ռումելիի երկաթուղի	..... Ֆր. ...	43 50
Օպլիկասիոն տը Բրիօրիթէ	..... »	—
Բաժնեթուղթ Լաւրիոմի	..... »	77

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ ժէնէրալ	..... Անգլ. Լ.	3 30
Ֆրէտի ժէնէրալ (Գ. Կ.)	... Օսմ. Լ.	7
Պանք տը Գոնս	..... » ...	5 32
Սօս. Շանժ է վալէօր	..... Օսմ. Լ.	3 25
Թրամուէյ	..... » » ...	282 1/2

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	..... ղրշ. ...	100
20 ֆրանքնոց	..... » ...	88 2
Անգլիական ոսկի	..... » ...	110 15
Բօլ Իմբէրիալ	..... » ...	90 12
Ֆրիմից	..... » ...	51 20
Ռուպլի թղթադրամ	..... » ...	8 88
» արծաթ	..... » ...	89 30
Ֆիօրին	..... » ...	9 —
Մէճ. արծ. (տարբ.)	..... » ...	107 38
Վէցնոց	..... » ...	103
Հինգնոց	..... » ...	103
Մէթալիք	..... » ...	98 20
Պղինձ	..... » ...	780
Թղթադրամ	..... » ...	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 13 Նոյեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլ. գոցուեցաւ	.....	100 7/16
Օսմն. բացուեցաւ	.....	8
» » գոցուեցաւ	.....	8 1/8
Օսմն. փոխառութիւն 1865	.....	11
» » 1869	.....	9 7/8
» » 1871	.....	67 3/4
» » 1872	.....	19 1/2
» » 1873	.....	8 3/8
Փոխառութիւն 1877	.....	80 1/2
Պանք Օթոման	.....	13 1/8
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	.....	94 7/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	.....	63 5/8
» առանձն. (բրիվիլէժիէ)	.....	85 5/8
Տայրա Սանիէ	.....	61 1/2
Տոմանիալ (փոխառ. Բօչիլտ)	.....	89
Հունգարական պարտատեղթ 1877	.....	102 1/2
Փոխանակութիւն Բարիզի վրայ	.....	—

Վիէննա, 13 Նոյեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	.....	123 10
Օսմանեան երկաթուղի	.....	21 20

Բարիզ, 13 Նոյեմ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	.....բաց	107 62 1/2
» » 3 0/0	.....բաց	78 25
Օսմանեան քոնսոլիտէ բացուեցաւ	.....	8 12 1/2
» » գոցու. (գ. կ.)	.....	8 15
» » 1865	.....	56
» » 1869	.....	50
» » 1873	.....	43
Օսմանեան երկաթուղի	.....	43 50
» Ռէժիի բաժնեթուղթ	.....	518 75
Պանք Օթոման	.....	581 25
Գրէտի Լիոնէ	.....	520
» Ֆոնսիէ	.....	1286 25
Բաժնետոմն Լիոնի (գուբ. կտր.)	.....	1210
Սուէզի ջրանցք	.....	1893 75
Ռուսական 5 0/0 1877ի	.....	99 1/4
Իտալական Ռանթ	.....	96 65
Եգիպտական միացեալ գոց	.....	323 75
Սպանիական (արտաքին)	.....	58 1/4
Բրիօրիթէ Թիւրք	.....	383 75
5 0/0 Հելլենական	.....	362 50
Զէք Լոնտրայի վրայ	.....	25 31

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Նոյեմբեր 13 ժ. 10, վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	.....	107 65
Օսմանեան »	.....	8 20
Եգիպտական միացեալ	.....	323 75

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33ՐԴ ՏԱՐԻ | 1884 ՆՈՅԵՄԲԵՐ 3 | ԹԻՒ 3741

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՆ Ց'ԵՒՐՈՊԱ ԵՒ Ց'ԱՄԵՐԻԿԱ

(Հրատարակ. Վերջին յօդուածէ)

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգաց քաղաքական կուսակցութեանց վրայ խօսելէ առաջ, կարեւոր կը համարինք ամփոփ դաղափար մը տալ այս մեծ Հանրապետութեան քաղաքական կազմակերպութեան վրայ։ Յայտնի է թէ Միացեալ Նահանգները Դաշնակցութիւն մ'են 38 անկախ Նահանգներու, որոնցմէ ոմանք Եւրոպոյ երրորդ կարգի թագաւորութեանց չափ բազմամարդ են։ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը կրկին է. նախ՝ կայ սոյն Նահանգաց խուրաքանչիւրին յատուկ կառավարութիւն մը, և յետոյ՝ ընդհանուրին վերաբերեալ Դաշնակցային կառավարութիւն մը։ Ամերիկեան Սահմանադրութիւնը բոլորովին կը տարբերի Եւրոպական Սահմանադրութիւններէն, որովհետեւ երկրին քաղաքական կազմակերպութիւնն իսկ հիմնովին տարբեր է Եւրոպոյ մէջ տեսնուած քաղաքական կազմակերպութիւններէ։ Ամերիկեան Սահմանադրութեան նպատակն եղած է՝ միշտ զօրաւոր և անվթար պահել մէն մի Նահանգի ինքնօրինութիւնը, միանգամայն Դաշնակցային (կամ կեդրոնական) կառավարութեան տալով այնչափ իշխանութիւն որչափ հարկաւոր է՝ Միացեալ Նահանգաց ամբողջութիւնն իբրեւ մէկ ազգ ներկայացընելու համար քաղաքակիրթ մեծ ազգաց շարքին մէջ, և ամերիկեան ազգին արտաքին յարաբերութիւնները մշակելու և ապահովութիւնն ու ազատութիւնն երաշխաւորելու համար։

Թէ՛ Նահանգային և թէ՛ կեդրոնական կառավարութիւնն երեսփոխանական և հանրապետական է։ Մէն մի Նահանգի ժողովուրդն ուղղակի քուէարկութեամբ կ'ընտրէ իւր Կառավարիչ, որ ճշմարիտ վեհապետ մ'է շատ նկատմամբ. և ամբողջ ամերիկեան ժողովուրդն երկրորդ աստիճանի քուէարկութեամբ կ'ընտրէ Հանրապետութեան Նախագահը։

Դաշնակցային կամ կեդրոնական կառավարութիւնը կը բաղկանայ Խորհրդարանէ մը, և գործադիր ու գատական իշխանութիւններէ, որք իրաւասութիւն ունին համայն երկրին մէջ։ Խորհրդարանը կը կազմուի Մերակոյտէ մը և Երեսփոխանաց ժողովէ մը։ Մերակոյտը կը բաղկանայ մեծ թէ փոքր մէն մի Նահանգի կառավարութիւնը ներկայացնող երկուական անդամներէ։ Երեսփոխանաց ժողովն ալ կը բաղկանայ ամերիկեան ժողովուրդը ներկայացնող Երեսփոխաններէ, զորս ամէն Նահանգ կ'ընտրէ՝ ըստ իւր բազմամարդութեան։ Մեծ Նահանգները շատ Երեսփոխան ունին Դաշնակցային Խորհրդարանին մէջ, բայց ամէն Նահանգ հաւասար քուէ ունին Մերակոյտին մէջ։ Մերակոյտի անդամը պարտի 30 տարին լրացուցած լինել, և կ'ընտրուի 6 տարուոյ համար. Երեսփոխանը գոնէ 25 տարեկան պարտի լինել, և կ'ընտրուի 2 տար-

ւոյ համար։ Խորհրդարանական երկամեայ շրջանին համար Ներակոյտի և Երեսփոխանութեան անդամք կը ստանան 6,000ական տոլար, որ կ'ընէ տարին 600 անգլ. ոսկի։ Նախագահը թոշակ կը ստանայ տարին 25,000 տոլար (5,000 ոսկի), նախարարք 8,000ական տոլար։

Նախագահը կ'ընտրէ նախարարները, բայց Ներակոյտին հաւանութեան կը կարօտին Նախագահին այս և ուրիշ ամեն անուանումները։ Նախարարք պատասխանատու են միայն առ Նախագահն, և չեն կրնար ամ՛ոռ ունենալ Խորհրդարանին մէջ։ Պէտք եղած օրինական ծրագրոց և կառավարական առաջարկներու մասին Նախագահն և իւր նախարարք Խորհրդարանին հետ կը հաղորդակցին տեղեկագրերով և համարատուութեամբք։ Մէն մի ժողով ունի իւր Դիւաններ արտաքին գործոց, երկրական գործոց, զինուորական գործոց, եւ, յորս նախարարք կրնան ի խորհրդակցութիւն և ի բացատրութիւն կոչուիլ. բայց Երեսփոխանութիւնը չի կրնար պաշտօնէ ձգել նախարարները, թէեւ կրնայ մերժել նոցա ծրագրերը։ Նախարարք Ամերիկայի մէջ չունին այն քաղաքական և խորհրդարանական գիրք զոր կը բռնեն Եւրոպիոյ սահմանադրական և մանաւանդ խորհրդարանական կառավարութեանց մէջ. և են առաւելապէս մէկ մէկ վարչապետ կամ գլխաւոր տնօրէն վարչութեան մէն մի ճիւղին։ Բայց ծայրագոյն պարագայից մէջ նախարարք կրնան ամբաստանուիլ Խորհրդարանէն, և Ներակոյտը կը դատէ։

Նախագահը չի կրնար օտար ազգաց հետ դաշնագրեր կնքել՝ առանց կանխաւ Ներակոյտին հաւանութեան ներկայացնելու։ Դեր–Նախագահն որ Նախագահին հետ կ'ընտրուի չորս տարւոյ համար և նորա տեղը կը բռնէ ի հարկին, նախագահն է Ներակոյտին։ Տրոց և երեւմտից վերաբերեալ առաջարկք Երեսփոխանական ժողովէն միայն կրնան ծագիլ։ Նախագահն իշխանութիւն ունի Խորհրդարանին մէկ որոշումը չվաւերացնելու, կամ քուէարկեալ ծրագրոյ մը օրէնքի ոյժ չտալու. բայց եթէ երկու ժողովներն իրենց անդամոց երկու երրորդին մեծամասնութեամբ վերահաստատեն նախորդ որոշումը, Նախագահը տեղի կուտայ։

Դաշնակցային Խորհրդարանին իշխանութիւնք որոշապէս դծուած են ամերիկեան Սահմանադրութեան մէջ, որ անգլիական Սահմանադրութեան պէս անջիջ աւանդութեանց և սովորութեանց հաւաքածոյ մը չէ (1)։ Այսպէս, որոշուած է թէ Դաշնակցային Խորհրդարանն իշխանութիւն ունի տուրք դնելու և հաւաքելու, Միացեալ Նահանգաց պաշտպանութեան և ընդհանուր բարեկեցութեան միջոցներն հայթայթելու, փոխառութիւն կնքելու, դրամ կտրելու, չափերն ու կշիռներն որոշելու, պատերազմ հրատարակելու և խաղաղութիւն կնքելու, եւ։ Բայց այն ամեն իրաւունքներ որք յատկապէս չեն յիշուած Սահմանադրութեան մէջ, վերապահուած են ժողովրդեան, կամ Նահանգաց։ Սոքա ներքին անկախութիւն մ'ունին։ Նահանգային կառավարութիւնք վճռապէս կը տնօրինեն Նահանգի մը յատուկ ամեն խնդիր, և մահու և կենաց վրայ իշխանութիւն ունին. բայց չեն կրնար դաշնագրեր կնքել, դրամ կտրել և ներածեալ վաճառքէն մաքս առնուլ, որ Դաշնակցային կառավարութեան իրաւունքն է։

Դաշնակցային գործադիր իշխանութեան Պետն է Նախագահը։ Չորս տարին անգամ մը, սովորաբար նոյեմբերին, ամեն Նահանգի բնակիչք ուղղակի քուէով կ'ընտրեն նախագահական ընտրողները։ Մէն մի Նահանգի նախագահական ընտրողաց թիւն հաւասար է նոյն Նահանգի Դաշնակցային Խորհրդարանի մէջ ունեցած Երեսփոխանաց և Ներակոյտի անդամոց թուոյն։ Այս կարգադրութենէ կ'օգտին փոքր Նահանգք, որք մեծերուն հետ հաւասար թուով անդամ ունին Ներակոյտին մէջ։ Ամեն Ամերիկացի քուէ կուտայ նոյնչափ նախագահական ընտրողներու, որչափ ոչինչ է ընտրուին իւր Նահանգէ։ Հետեւապէս, Նահանգի մը մէջ մեծամասնութիւն ունեցող կուսակցութեան նախագահական ընտրողք ամբողջովին կ'ընտ-

(1). Անգլիոյ միայն ընտրական օրէնքներն, իբրև հաստատակ օրէնք, դրաւոր են. բայց խորհրդարանի երկու ժողովոց կազմութեան և լուծման եղանակին իրաւասութեան ստիճանին և գործադիր իշխանութեան սեռ յարաբերութեան վերաբերեալ կարեւորագոյն տրամադրութիւնք աւանդութիւն մ'են միայն։ Այս պատճառաւ Անգլիոյ մէջ մեծ արժէք կը տրուի հաստատեալ նախընթաց օրինակներուն։

ռուին։ Բայց այս առաջին ատիճանի գործողութեամբ իրապէս կ'որոշուի Նախագահին ընտրութիւնը, և կ'իմացուի թէ ո՛վ պիտի լինի Նախագահ։ զի թէեւ Սահմանադրութիւնն երկրորդ ատիճանի ընտրութիւն մը սահմանած է, թէեւ պաշտօնապէս այս նախագահական ընտրողներն են որ իրաւունք ունին Նախագահ ընտրելու զով ոք պատշաճ դատեն, բայց օրէնքի կարգանցած սովորութիւն մ'է որ Միացեալ Նահանգաց երկու մեծ կուսակցութիւններն (որոց վրայ քիչ մը վարը կը խօսինք,) նախապէս համագումար ժողով մը կազմելով, իւրաքանչիւրը կ'որոշէ իւր ընտրելիներ ի Նախագահութիւն և ի դեր-Նախագահութիւն։ Մէն մի կուսակցութեան այս համագումար ժողովքն կը մասնակցին նոյն կուսակցութեան Երեսփոխանք և Ներակայի անդամք, թէ՛ կեդրոնական և թէ՛ նահանգային։ Այս կերպիւ մէն մի կուսակցութեան նախագահական ընտրելիք որոշուելէ յետոյ, նախագահական ընտրողաց պարտքն է քուէ տալ իրենց կուսակցութեան ընտրելեաց։ (¹)

* * *

Միացեալ Նահանգաց ժողովուրդը բաժնուած է երկու մեծ կուսակցութեանց, Հանրապետական և Ռամկավարական կոչուած։ բայց այս վերջին բառ սխալ է։ զի ռամկավարութիւն կոչուած վարչային ծայրայեղ ձեւը չէ՛ Ամերիկայի Տէմոքրաթներուն սկզբունքն։

Այս երկու կուսակցութեանց ծագման, սկզբանց և արդի կացութեան վրայ համառօտ տեղեկութիւն մը անօգուտ չլինիր։

Ամերիկայի անգլիական գաղթականութիւնք, որք Միացեալ Նահանգաց Հանրապետութեան հիմը դրած են, Անգլիոյ դէմ ապստամբելով անկախութիւն ձեռք բերին 1781 հոկտ. ին, յորում տեղի ունեցաւ Ուաշինկդոնի հրամանաց ներքեւ գտնուող ամերիկեան զօրաց վերջին յաղթութիւն անգլիական զօրաց վրայ։ Ամերիկացւոց հռչակաւոր Անկախութեան Յայտարարութիւնն եւս այդ պատմական եղելութենէ հինգ տարի առաջ հանուած էր, և կը հռչակէր մարդոց հաւասարութիւնն և ինքնավարութեան իրաւունքը զոր առ հասարակ ամեն մարդիկ կը վայելեն, և այն սկզբունք թէ «կառավարական իշխանութիւն մը, արդար լինելու համար, կառավարելոց հաւանութիւնն ստացած պէտք է լինի։» Յայնժամ 13 Նահանգք Միութիւն մը կազմեցին։ 1787-88 ին նոր Սահմանադրութիւն մը խմբագրեցաւ, որ ցայսօր ի գործադրութեան է։ Այս Սահմանադրութեան պատրաստութեան առթիւ մեծագոյն դժուարութիւն մ'եղած էր Նահանգաց ինքնօրինութիւնն հաշտեցնել կեդրոնական իշխանութեան մը զորութեան հետ։ Երկիրը տակաւին նոր ազատած էր արտաքին պատերազմէ մը, և պէտք ունէր զօրաւոր կառավարութեան մը։ Բայց միւս կողմէ, ամերիկացի ժողովուրդն այդ պատերազմը մղած էր կեդրոնական բռնաւոր իշխանութեան մը լուծը չկրելու համար։ և Անգլիոյ բռնութենէն ազատելէ յետոյ, ամերիկեան անունը կրող Անգլիացիներու բռնութեան չէին կրնար ենթարկուիլ։ Այս ներհակ սկզբամբք և կեդրոնացման ու ապակեդրոնացման խնդիրներով ծագած դժուարութիւնք տարիներ տեւեցին, և պատճառ եղան բոլորովին բացառիկ հանդամանք մը տալու ամերիկեան Սահմանադրութեան, ըստ որում պարտէին հաշտեցնել հակառակ շահեր։

Այս առաջին վէճերու մէջ պարտինք որոնել Միաց. Նահանգաց երկու մեծ կուսակցութեանց ծագումը։

1788 ին յիշատակուած կը գտնենք «Դաշնակցայիններ», որք կուսակից էին կեդրոնական իշխանութեան և կը ձգտէին զօրացընել զայն, և «Հակադաշնակցայիններ,» որք Նահանգաց ինքնօրինութեան ոյժ կուտային։ Ամերիկեան անկախութեան և ազգութեան գլխաւոր հիմնադիրն, Ուաշինկդոն, որ առաջին Նախագահն եղաւ, «Դաշնակցային» կուսակցութեան գլուխն էր։ Իւր յաջորդ, Ճոն Ատամս, նոյն կուսակցութեան կը պատկանէր։ բայց կեդրոնացման սկզբունքն այնչափ յառաջ տարաւ, որ երկ-

(¹) Այս պատճառաւ, այս տարի եւս, նոյեմբի սկիզբը նախագահական ընտրողաց կամ պատուիրակաց ընտրութենէն իմացուեցաւ թէ Պ. Քլիվլէնտ Նախագահ ընտրուած է և ո՛չ Պ. Պլէն։ Բայց իսկապէս առաջիկայ ամսոյ մէջ է որ այս նախագահական ընտրողք իրենց կնքեալ քուէները պիտի դրկեն Ուաշինկդոն, կեդրոն Դաշնակցային կառավարութեան։

ին մէջ զօրացաւ այն ժամանակ «Հանրապետական» կոչուած կուսակցութիւնն, որ արդի «Ռամկավարական» կուսակցութիւնն է։

1801 ին Նախագահ ընտրեցաւ Պ. Ճէֆֆէրսըն, այժմու Ռամկավարականաց կուսակցութենէն ընտրեալ առաջին Նախագահը։ 1811 ին Միացեալ Նահանգներն և Անգլիա երկրորդ պատերազմ մ'ունեցան, զոր Ռամկավարականք յաջող վախճանի մը բերին։ Ասոր վրայ, նախկին «Դաշնակցային» կուսակցութիւնն անհետացաւ։ Նախագահ հռչակաւոր Մօնրօ, — որ ամերիկեան ազգին ամերիկեան հողի տէր լինելն հռչակեց և յապագային ամերիկեան հողի վրայ եւրոպական անկախ գաղթականութեանց հաստատումն և եւրոպական ամեն միջամտութիւն արգիլեց միանգամ ընդ միշտ — 1817ին ընտրեցաւ առանց կուսակցական կուսոյ, ընդհանուր եղբայրակցութեան պահու մը մէջ։

Այս խաղաղ վիճակ կը տեւէ մինչեւ 1824, յորժամ ամերիկեան ժողովուրդը չմասնակցիր իսկ Նախագահի ընտրութեան, զոր կը թողու կեդրոնական Երեսփոխանութեան որոշման։ Բայց այդ թուականէ ի վեր կուսակցական հուրը նորէն կ'արծարծի։ Նորընտիր նախագահը, Պ. Ատամս, որ ցայն վայր Պ. Ճէֆֆէրսընի (արդի Ռամկավարականաց) կուսակցութեան հետ գործած էր, կը յարի նոյն կուսակցութեան հակառակ սկզբունքներ ջատագովող նոր կուսակցութեան մը, որ յայնժամ կոչուեցաւ «Ազգային Հանրապետական», յետոյ՝ «Ուիկ», (Անգլիոյ Ազատականներն,) և որ այժմու Հանրապետական կուսակցութիւնն է։

1828 ին, Ռամկավարականք նորէն իշխանութեան անցան, բայց զանազան խնդրոց մէջ ժողովրդեան հանկրութիւնը կորուսանելով, 1840 ին տեղի տուին «Ուիկ»-ներուն, որք ժողովրդային մեծ յուզման մը շնորհիւ յաջողեցան Նախագահ ընտրել իրենց Պեան, Հարիսըն դօրավարը։ Բայց սա մեռաւ ամիս մը յետոյ, և դեր-Նախագահը ռամկավարական կուսակցութեան սկզբանց համեմատ վարեց Նախագահի պաշտօնն, այսինքն՝ Նահանգաց շահերուն այժ տալով։

Գերի պահելու խնդիրն երկար ժամանակէ հետէ կը բաժնէր ամերիկեան ազգը։ Ի սկզբան զրկեցէ բոլոր Նահանգները բնիկ գերիներ ունէին, որք կը մնակէին արտերը։ Նահանգաց շահերուն պաշտպանները գերի պահելու դրութեան ալ կուսակից էին։ Այս պատճառաւ, Ռամկավարականք ի վերջոյ Հարաւային Նահանգաց կուսակցութիւնն եղան, որք գերի կը պահէին. իսկ Հանրապետականք, որք աւելի ազատական վարդապետութիւններ կը դաւանէին, գերութեան ջնջման կողմը բռնելով, Հիւսիսային Նահանգաց կուսակցութիւնն եղան, ուր գերութիւնը տակաւ ջնջուած էր։ Հարաւային Նահանգներն առաւելապէս հողագործ լինելով, նիւթապէս մեծ շահ ունէին գերիներու պահպանման մէջ. մինչ Հիւսիսայինք վաճառական և արհեստաւոր էին, և գերիներ չէին պահուեր գործարաններու մէջ։

1860 ին, Ռամկավարականք, որ կարճատեւ բացառութեամբ 1800 էն ի վեր իրենց ձեռաց ունեցած էին Դաշնակցային կառավարութիւնն, բաժնուեցան, և այս հերձուածէ օգուտ քաղեցին Հանրապետականք, յաջողելով Նախագահ ընտրել զՊ. Լինքըլն, որոյ օրով տեղի ունեցաւ Հարաւայնոց, կամ գերի պահողներուն, և Հիւսիսայնոց, կամ գերութեան ջնջումը պահանջողաց պատերազմն։ Այս պատերազմն յաջող վախճանի մը բերելով, Հանրապետականք մինչեւ 1884 անընդհատ իշխանութիւն վարեցին։ Բայց առաջիկայ մարտին տեղի պիտի տան Ռամկավարականաց, որք այս 24 տարուոյ մէջ բարեբաղդեցին իրենց համբաւն, և այսօր կը դաւանին առաւել ազատական վարդապետութիւններ, մանաւանդ մաքսային խնդրոյ մէջ։ (1)

* * *

Ֆրանսայի, Գերմանիոյ և Անգլիոյ քաղաքական կուսակցութեանց մէկ ընդհանուր քննութեամբ սա եզրակացութեան եկած էինք թէ, լոկ դաղափարները չեն որ կ'ապ-

(1). Ի նկատ առնելով Ռամկավարական (Տիմոքրատ) կուսակցութեան պատմական նշանակութիւնն, աւելի ճիշդ կը լիներ «Նահանգավարական» անուանել զայն, մանաւանդ թէ այս կուսակցութիւն ի սկզբան «Ազէյդս Բարդի» (Նահանգաց կուսակցութիւն) ևս յորջորջուած է, որ ճշդիւ կը ներկայացնէ իւր սկզբունքներ, մինչ «Ռամկավարութիւն» իմաստ չունի բնաւ։

բեցնեն կուսակցութիւններն, այլ երկրի մը կամ ժողովրդեան դասու մը մեծամեծ շահերը. թէ ուր որ կան այսպիսի շահեր, կուսակցութեանց կազմութեան պէտքն ինքնին զգալի եղած է, և ընդհանրապէս չեն ապրած այն կուսակցութիւնք որ չէին կըրնար ներդործել ազգի մը ճակատագրոյն վրայ, մանաւանդ նորա նիւթական բարեկեցութեան վրայ։

Միացեալ Նահանգաց մէջ առաւել քան այլուր նիւթական շահերն են որ կանգուն կը պահեն կուսակցութիւններն։ Հանրապետականք և Նահանգավարականք ո՛չ այնչափ դաղափարներով ու սկզբունքներով, որչափ շահերով բաժանեալ են իրարմէ։ Հանրապետականք՝ դերութեան ջնջումը ջատագովելով՝ Հիւսիսի վաճառական և ճարտարադործ դասուց շահերը կը ներկայացնէին, ինչպէս նաեւ երբ մաքսերը բարձրացնելու քաղաքականութեան կը հետեւին. զի ամերիկեան նորածին դործարանք Եւրոպայի մրցման դէմ պաշտպանուիլ կ'ուզէին, և տակաւին կ'ուզեն։ Նահանգավարականներն ալ սկիզբէն ի վեր մասնաւոր Նահանգաց շահերը պաշտպանած են, և եթէ ազատ-փոխանակութեան յարեալ են մասամբ, Հարաւի շահուն համար է, որ մեծադոյն մասամբ հողագործ լինելով, Եւրոպոյ հետ փոխանակութեանց դիւրութեան յոյժ կը կարօտի, թէ՛ իւր հողագործական բերքերն Եւրոպայոց վաճառելու և թէ՛ ոչ-հողագործական իւր ամեն պիտոյք աժան դներով Եւրոպայէն հայթայթելու համար։ Դարձեալ Հարաւի նիւթական շահուց համար էր որ սոյն կուսակցութիւն դերութեան պահպանումը կ'ուզէր. ապա թէ ոչ՝ դաղափարի և սկզբանց կողմէ՝ Հարաւայինք Հիւսիսայիններէն նուազ բողոքական և նուազ մարդասէր չէին։

1884ի նախագահական ընտրութեան առթիւ եւս, երկու կուսակցութիւնք, որք դրէթէ հաւասար զօրութիւն ի հանդէս բերին, ժողովրդեան քուէները շահեցան առաւելապէս նորա նիւթական շահուց կուռմ ընելով, քան որ և է վերացական սկզբան։ Միացեալ Նահանգաց այլ և այլ մասանց նիւթական շահերը նոյն չեն։ Ապրանաց դնոյն սուղ պահումը քանի մը Նահանգաց շահուն կը յարմարի, և այլոց չի յարմարիր։ Ըստ այսմ, ոմանք հանրապետական ընտրելեաց քուէ տուին, որոց քաղաքականութիւնն է սուղ պահել ապրանաց դներն, և այլք Նահանգավարականաց, որք ապրանքներն աժանցնելու կողմն են։

Երկրին այս ընդհանուր շահերէն զատ, այլ և այլ դասուց մասնաւոր շահերն ստանձնելով է որ երկու կուսակցութեանց պետերը ջանադիր եղան յաղթանակ տանիլ։ Նահանգավարականք խոստացան «մաքրել հանրապետական վարչութիւնն», այսինքն ճամբել այժմեան պաշտօնեայները. զի Նախագահն իրաւունք ունի իբր 100,000 պաշտօնեայներ փոխելու և նորեր անուանելու։ Հանրապետականք ընդհակառակն խոստացան պահել այժմու վարչութիւնն, և հետեւապէս պաշտօնի հետամուտներն և իրենց պաշտօնը պահել ուզողները քուէարկեցին իրենց շահուց համեմատ։

Ամերիկեան կուսակցութեանց պետերն յոյժ դործնական մարդիկ են։ Միլիոններով տոլար ծախք ըրին յաջողցնելու համար իրենց ընտրելիներ. զի յայտնի թէ՛ իրենք և թէ՛ իրենցմէ պաշտպանեալ դասեր նիւթական մեծամեծ շահեր ունէին։ Երկաթուղեաց ընկերութիւնք իրենց բոլոր ոյժը տուին Պ. Պլէնի, որ երկաթուղւոյ գործոց մէջ նշանաւոր շահադէտ մ'է, յորմէ կ'ակնկալէին նպաստաւոր պայմաններ, և երբ Պ. Ֆլիվլէնտ ընտրուեցաւ, երկաթուղւոյ բաժիններն ինկան։ Ժողովրդեան ստորին դասերն երկու կողմէն եւս կաշառեցան այսպէս կամ այնպէս քուէարկելու և կամ դէթ ձեռնպահ մնալու համար։ Որք ուղղակի չկաշառեցան, անուղղակի կաշառեցան։ Ժողովրդային դասերէն տասնեակ հազարներով անձինք հրապարակային սեղաններու վրայ լիախորտիկ ճաշեցին ի հաշիւ Պ. Ֆլիվլէնտի կամ Պ. Պլէնի։ Բայց աւելորդ է բաղմացնել այս կարգի օրինակներ։ Օրագրաց մէջ կարելի է ամեն օր դտնել զանոնք։

*
* *

Մեր մէջ բաւին բուն նշանակութեամբ կուսակցութիւնք չեն կրնար գոյութիւն ունենալ. զի մեր ազգային իշխանութիւն չազդեր ժողովրդեան նիւթական բարեկեցութեան, հայի ֆնդրոյն վրայ, եւ այս խնդրէ զատ ամեն խնդիրք կրնան ան-

տարբեր թողուլ ժողովուրդը։ Վայրկենապէս այս կամ այն խնդիր կրնայ յուզել ժողովուրդն, և ուր որ յուզում կայ, հոն կուսակցութիւնք կարելի են։ բայց ճշմարիտ կուսակցութիւնք անոնք չեն որ մասնաւոր խնդրոյ մը համար կը կազմուին։ Ազգի մը վարչութիւնը պէտք է ազդեցութիւն ունենայ ժողովրդեան զանազան դասուց շահերուն վրայ, որպէս զի կարենայ զանազան կուսակցութիւններու բաժնել այդ շահեր։ Մեր Պատրիարքութիւն հայրական իշխանութիւն մ'է. մեր ազգային վարչութիւն բարոյական իշխանութիւն մ'է. մեր բոլոր Երեսփոխանք, երբ անկեղծ են, Ազգին միեւնոյն բարոյական շահերն ունին իրենց առջեւ. — մեր գաւակները կրթել, մեր եկեղեցիները, վանքերն ու բարեգործական հաստատութիւնները կանգուն պահել, հիւանդ և անօգնական ազգայինները խնամել, բարեկիրթ եկեղեցականներ հասցընել, և այլն։ Երբեմն խօսուած է «մեծատանց» կուսակցութեան մը վրայ։ Մեք ասոր ալ շատ չենք հաւատար. զի չենք հասկնար թէ ազգային գործերն ի՛նչ շահ կրնան բերել հայ մեծատանց, որք նիւթապէս աւելի պիտի շահէին իրենց անհատական գործոց միայն պարապելով։ Գաղափարներով ու կարծիքներով իրարմէ կը բնանք տարբերիլ. բայց նախընթաց յօդուածոց մէջ թերեւս կրցանք ցոյց տալ թէ միայն կարծեաց տարբերութիւնը բաւական չեն կուսակցութիւններ կազմելու համար, երբ շահերու տարբերութիւնք եւս չկան։ Արդ, մեր ազգային իշխանութեան բնութեամբն իսկ անկարելի է երեւակայել մեր մէջ շահուց այս տարբերութիւն։ Երբ ամենքս ալ անկեղծապէս կը ծառայենք ազգին, տարբեր շահեր չենք կրնար ներկայացնել։ Այսպէս չէ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ։ Ուստի, լաւ է չխաղալ բառերու հետ։ Հայերը չեն կրնար բաժնուիլ ճշմարիտ կուսակցութեանց, եւ երբ լսենք թէ «կուսակցութեանց» խօսքեր կան օդին մէջ, պէտք է իմանանք թէ ազգային գործերը լաւագոյն վիճակի մէջ չեն գտնուիր։

Բ. ՔԻԶԵԱՆ

ՀԱՆԳԻՍՏ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Շաբաթ մ'անցաւ յորմէ հետէ խորին տխրութեամբ ծանուցինք մեր վերջին թուով թէ Ամեն. Ներսէս Սրբազան Պատրիարք Հայրն մեր հանդեաւ ի Տէր, հոկտեմբեր 27ի ուրբաթ օրն, Օրթագիւղ, իւր բնակարանին մէջ։

Յայտնի է թէ Ն. Սրբազնութիւն բաւական ժամանակէ հետէ շաքարի ախտէ եւ սրտի հիւանդութենէ կը նեղուէր։ Սրտի հիւանդութեանց մէկ տխուր յատկանիշն է յանկարծական մահ։ Նորին Սրբազնութիւն վերջին օրերը բաւական հանգիստ վիճակի մէջ էր, որ յոյսեր կը ներշնչէր իւր բազմաթիւ բարեկամաց. հինգշաբթի դիշեր ժամը 7ին ննջած էր բաւական հանգիստ. սովոր էր մինակ ննջել, եւ երբ տագնապ չունենար, ո՛չ ոք կը հսկէր իր քով։ Առաւօտուն ժամ 5ին չէր արթնցած, և չ'ուզելով խանգարել իւր քունն, ո՛չ ոք սենեակը մտած էր ձայն տալու։ Բայց ժամ 7ին, ճաշի ժամանակ տակաւին արթնցած չլինելով, սենեակը կը մտնեն և կը տեսնեն թէ Ներսէս Սրբազան իւր վերջին շունչը տուած էր արդէն։ Այսպէս վախճանեցաւ Տ. Ներսէս Պատրիարք։ Հանդուցելոյն դէմքը շատ չէր փոխուած, որ ցոյց կուտայ թէ իւր վերջին վայրկեաններուն մէջ սաստիկ ճգնաժամ մը չէր անցուցած եւ խաղաղապէս ննջած էր յաւիտենական քունով։

Ն. Սրբազնութեան ընտանիքն անմիջապէս կանչել տուին հայազգի բժիշկներէն Տօքթ. Սեւեան, Աղասեան պէյերն և Տօքթ. Շիշմանեան էֆէնտին որք ցաւալի իրողութիւնը ստուգեցին գիտնականապէս։

Օրթագիւղի եկեղեցեաց զանգակներն սկսան հնչել տխրանուագ։

Քաղաքական ժողովոյ Ատենապետ Վրսեմ. Սիմոն պէյ Պէշիկթաշի հրամանատար Հասան փաշային ծանոյց եղելութիւնն, եւ երկուքն ի միասին կայսերական Պալատը գընացին։ Վեհ. Սուլթանը տխրութեան արտայայտութեամբ մ'իմացաւ Տ. Ներսէս Պատ-

բիարքի վախճանման լուրը։ Ժամը 9ին Ազգային Պատրիարքարան լուր կը ղրկուէր և իրիկունն ալ «Արեւելք» Յաւելուածով մը առաջին լուրը կը դուժէր Ազգին։

Երբ Հասան փաշա Պէշիկթաշ վերադարձաւ, անմիջապէս պինուորներ դնել տուաւ հանդուցելոյն բնակարանին առջեւ, ի պատիւ Ն. Սրբազնութեան։

Ազգային Ժողովոյ Ատենապետ Տիգրան էֆէնտի Եուսուֆեան, Կրօնական Ժողովոյ Ատենապետ Գեր. Խորէն Նար-պէյ Սրբազան և Պատրիարքական փոխանորդ Գեր. Ռուսճուքլեան Հայրն երեկոյեան ժամ 12ին Հանդուցելոյն բնակարանը գնացին եւ Ն. Սրբազնութեան բոլոր թուղթերը կնքոյ ներքեւ դրին։ Նոյն գիշերը Խորէն Սրբազան, Տիգրան էֆէնտի և Սիմոն պէյ խորհրդակցեցան ձեռք առնուելիք առաջին միջոցներուն վրայ։ Տխուր եղելութիւնն առ Ազգն ծանուցանող յայտարարութիւն մը խմբագրեցին, նմանապէս հայերէն և ֆրանսերէն ազգեր։ Յետոյ, յուղարկաւորութեան և թաղման պարագայներն որոշելու համար Յանձնաժողով մը կազմուեցաւ հետեւեալ պատուարժան անձերէ.

Վ.սեմ. Արիկ էֆէնտի Ունճեան, Արթաքի էֆէնտի Նորատունկեան, Աւետիս էֆէնտի Հարէնց, Վ.սեմ. Բարսեղ էֆէնտի Հալաճեան, Վ.սեմ. Գաբրիէլ էֆէնտի Նորատունկեան, Գաբրիէլ էֆէնտի Գաբրիէլեան, Վ.սեմ. Իլիաս էֆէնտի Զայեան, Խաչիկ էֆէնտի Կամարական, Կարապետ էֆէնտի Սըվաճեան, Միհրան էֆէնտի Զօսլանեան, Միքայէլ էֆէնտի Յակոբեան, Մկրտիչ էֆէնտի Էսաեան, Յարութիւն էֆէնտի Մէրեէմդուլի, Յովհաննէս էֆէնտի Թորոսեան, Վ.սեմ. Յովհաննէս էֆէնտի Նուրեան, Վ.սեմ. Տիգրան էֆէնտի Եուսուֆեան, և Տիգրան էֆէնտի Կիւմիւշկէրտան։

Այս Յանձնաժողով իւր ամբողջութեամբ շաբաթ կէս օրին դումարեցաւ ի Պատրիարքարան։ Անդամոց շատեր կարծիք յայտնեցին թէ ազգային պաշտօնական մարմնոց ներկայացուցիչք ամաւորած են թաղման հանդէսն յաջորդ աւուր, կիրակի համար որոշելով, մինչ լաւագոյն կը լինէր յետաձգել մի քանի օր, որպէս զի աւելի փառաւոր թաղման մը նախապատրաստութեանց ժամանակ գտնուէր։ Սակայն ազգային պաշտօնական մարմնոց ներկայացուցիչք յայտարարեցին թէ ըստ բժշկաց վկայութեան անհնարին էր երկար սպասել։ Սակայն հոգելոյս Սրբազանի մարմնոյն մինչեւ կիրակի իսկ անարատ վիճակի մէջ մնալն անկարելի լինելով, Յանձնաժողովը կարծիք յայտնեց թէ՝ հարկ էր զմեռեալ Ն. Սրբազնութեան մարմինն, Օծման արարողութիւնն հնարաւոր գործելու համար. բայց եկեղեցական Հարք ընդդիմացան այսմ, կրօնից հակառակ նկատելով եկեղեցականի մը մարմնոյն վրայ այսօրինակ բժշկական գործողութեան մը կատարումն։ Յանձնաժողովը տեղի տուաւ եկեղեցական դասուն դիտողութեանց, եւ այս կերպով, որոշուեցաւ անմիջապէս կատարել Օծման արարողութեան այն մասերն որք ուղղակի կը վերաբերին Հանգուցելոյն մարմնոյն։ Հետեւաբար Ամեն. Եսայի Սրբազան կատարեց Օծումն, յետ որոյ հոգելոյս Սրբազանի մարմինը զետեղուեցաւ ցուրտ տեղ մը, մարմարիոնի վրայ։ Այս տխուր պարտականութեանց կատարումէն յետոյ, Յանձնաժողովն զբաղեցաւ մինչեւ երեկոյ կիրակի աւուր հանդիսին պատրաստութիւններովն։ Նոյն երեկոյին «Արեւելք» յատուկ Յաւելուածով մը հաղորդեց սոյն կարգադրութիւններն։

Կիրակի առաւօտ, Հանգուցելոյն մարմինը բարձրադիր տեղ մը կը կենար Մայր Եկեղեցւոյ միջին Տաճարին մէջ։ Մասնական միջոցներ ձեռք առնուած էին մարմնոյն արագ կազմալուծումն արգիլելու համար։ Զինկոյէ սնտուկի մէջ դրուած էր, յորում դէմքը միայն կը տեսնուէր՝ ապակւոյ մը ներքեւ։ Վախճանումէն յետոյ արիւն հոսած էր մարմնէն եւ դէմքն շատ այլափոխուած էր։ Քանի մը տարի առաջուան այն քաջառոյզ և գեղադէմ Ներսէսը տեսնել այս վիճակին մէջ և չարտասուել՝ անհնար էր։

Խուռն բազմութիւն առաւօտէն ի վեր կը լնուր Մայր Եկեղեցին. բայց գոնէ միջին տաճարին մէջ բարեկարգութիւն պահպանել կարենալու համար, որոշուած էր ընտրեալ բազմութիւն մը միայն ներս առնուլ։ Ժողովուրդն այս կարգադրութեան համար իւր տհաճութիւնը ցոյց կուտար՝ միջին Տաճարի բոլոր դուռները պաշարած շարունակ բաղխելով և ժխոր յարուցանելով։

Այս անկարգութիւն վերջ չդտաւ մինչեւ որ ոստիկանք եկան։

Ժամ 4½ին, սկսան եկեղեցական պաշտամունք։ Բոլոր հայ եկեղեցեաց և շրջակայ յոյն եկեղեցեաց զանգակները տխրագին կը հնչէին 10–15 վայրկեանն անգամ մը։ Կ. Պոլիս գտնուող բոլոր եպիսկոպոսունք և բազմաթիւ վարդապետք և քահանայք ներկայ էին, եւ պաշարած խորանն ու դադաղը։ Երուսաղիմայ Ս. Պատրիարքին տկարութեան պատճառաւ, նորատեղ Ս. Պատարագ մատոյց Երուսաղեմի Փոխանորդ Գեր. Տ. Սիմէոն Եպիսկոպոս։

Դասն, որ բարձրատիճան հրաւիրելոց յատկացեալ էր, և անոր ետեւի շրջափակն, որ ազգային մարմնոց յատկացեալ էր, հետզհետէ կը լցուէին հանդիսականաց ընտրեալ բազմութեամբ մը։

Դասուն մէջ կը տեսնուէին. —

Զանազան հասարակութեանց կողմէ.

Յունաց Պատրիարքական Գեր. Փոխանորդն, ընկերակցութեամբ Բաղկեդոնի և Սելանիկի Մետրապոլիտներուն, և յոյն հասարակութեան քանի մը երեւելեաց. — Ֆէնէրի Պատրիարքարանի Գործակատար Սգավրաքի էֆէնտի, Լողթէթի պէյ, Արիսդարքի պէյ, Նիքոլաքի Սքուլիտի էֆէնտի և Եէնիտունեա Տիմիթրաքի էֆէնտի։

Պուլկարիոյ Գեր. Էկզարքին կողմէ ղրրկուած երկու եկեղեցականք։

Հրէից Գեր. Բաբունալեանին Փոխանորդն, ընկերակցութեամբ ուրիշ Բաբունուոյ մը, և մի քանի հրեայ երեւելեաց։

Ասորւոց Ամեն. Կաթողիկոսին Փոխանորդ Գեր. Դիոնեսիոս եպիսկոպոս, ընկերակցութեամբ իւր խորհրդական վարդապետին։

Հայ–Բողոքական հասարակութեան Վրսեմ. Ազգապետն, ընկերակցութեամբ նոյն հասարակութեան երեւելեաց, Պատուելի Իւթիւճեան, Բրոֆ. Յ. Ճէմիկեան, Յ. Մինասեան, և։

Կառավարական պաշտօնատանց կողմէ ներկայ էին.

Կրօնական դործոց Տեսուչ վեհ. Զիվէր պէյ։

Բարձր. Մեծ Եպարքոսին կողմէ իւր թարգման Վէքիլ էֆէնտի և արարողապետ Նէշէթ էֆէնտի իւր օգնականով։

Արտաքին դործոց նախարարութեան կողմէ Վսեմ. Արթին պէյ Տատեան, Վսեմ. Գ. էֆէնտի Նորատունկեան, Վսեմ. Իլիաս էֆէնտի Զայեան և Միքայէլ էֆէնտի Կիւլլապեան։

Դատական նախարարութեան կողմէ վեհ. Վահան էֆէնտի։

Սպայակոյտի անդամ Ֆէրիք Վսեմ. Նէճիպ փաշա։

Պետական խորհրդոյ անդամ Վսեմ. Յովհաննէս էֆէնտի Նուբեան և Իբիտէս էֆ.

Ասոնցմէ զատ, ներկայ էին կառավարական այլեւայլ պաշտօնատանց մէջ ծառայող դրեթէ բոլոր հայազգի պաշտօնատարք, և բոլոր դեսպանատանց թարգմանք և մի քանի հիւպատոսք։

Այս ամենայն ներկայացուցիչք դեսպանատանց և կառավարական պաշտօնատանց եկեղեցական արարողութեանց մինչեւ վերջն ամենայն երկիւղածութեամբ ունկնդրեցին, և անոնցմէ ոմանք, մանաւանդ յոյն եկեղեցականք և աշխարհականք, համբուրելով հոգելոյս հանդուցելոյն դէմքն և աղօթելով արտասուալից, ջերմեռանդութիւն ալ ցոյց տուին։

Նշանակելի բացակայութիւն մ'էր Հռոմէական Հայոց Պատրիարքին կողմէ բնաւ ներկայացուցիչ ղրկուած չլինելն, որ շատ անսպասելի և անհաճոյ տպաւորութիւն մ'ընաւ համայն ժողովրդեան վրայ։ Այս թերութիւն այնչափ աւելի աչքի կը զարնէր, որչափ հանդուցեալն ինք իւր վերջին հրաժարագրոյն մէջ շատ մը անձանց շնորհակալութիւններ յայտնելով իրենց բարեկամական զդացմանց համար, չէր մոռցած նշանակել նաեւ Գերերջանիկ Ազարեան Ս. Պատրիարքին անունը։ Հայ–բողոքական հասարակութեան դըլխոյ ընթացքն աչքի զարնող հակոսպատկեր մ'էր մեր Կաթոլիկ եղբարց պաշտօնական մարմնոյ անպատշաճ ընթացքին։ Արդարեւ հանդիսականաց մէջ կը տեսնուէին մի քանի երեւելի Հայ–Հռոմէականք, ինչպէս Թընկըր Եավէր փաշա, Օննիկ պէյ Մըսըրլը, և այլք։ Բայց Հայ–Հռոմէական հասարակութեան պաշտօնական մարմնոյ բացակայութիւնն անբացատրելի էր։

Որչա՜փ տարբեր էր սակայն յոյն հասարակութեան ընթացքը։ Ոչ միայն Ֆէնէրի Պատրիարքարանը պէտք եղածին պէս ներ-

կայացեալ էր կիրակի աւուր հանդիսին մէջ, այլ և Մայր Եկեղեցւոյ մօտակայ բոլոր յոյն եկեղեցեաց վարդապետք և քահանայք դըսլրոցական աշակերտներով և պսակներով փութացեր էին դալ հոդեհանդստեան պաշտամանց, և մինչեւ վերջն ամենայն երկիւղածութեամբ հետեւեցան բոլոր արարողութեանց, որք տեւեցին մինչեւ ժամը 10։ Պէ՞տք էր միթէ որ հայ-հռոմէական եկեղեցականութիւնն այնքան անհաշտ ոգւով մը առդորեալ լինէր։

Գեղեցիկ և խորհրդաւոր պսակներ, խաչեր և փունջեր՝ առ մեծանուն հանգուցեալն երախտագիտական ձօներով զարդարեալ՝ յատուկ պատգամաւորութեանց ձեռամբ բերուելով դրուեցան Հոդելոյս Սրբազանին դադաղին վրայ ազգային ընկերութեանց ու հաստատութեանց կողմէ։

Դպրոցասէր Տիկնանց ընկերութիւն շատ պատշաճաւոր եղանակաւ ներկայացեալ էր, իւր աշակերտներէն սպիտակազգեստ սգակիր խումբ մը գեղեցիկ յօրինուած խաչի մը շղարշներէն բռնած ներկայանալով յեկեղեցւոջ և ընկերանալով թափորին։

Նմանապէս խաչերով, պսակներով և աշակերտաց մէկ մէկ խմբերով ներկայացեալ էին Մէջզուրեան, Պէրպէրեան և Գուրդէնեան մասնաւոր վարժարանք, Ռոպէրտ-Քոլէժի հայ ուսանողք, Կայսերական Միլքիյէ վարժարանի հայ ուսանողք, եւայլն։

Հանգուցելոյն մասնաւոր բարեկամներէն ոմանք եւս առանձին պսակներ բերած էին։

Թաղ Խորհրդոց, Ընկերութեանց և Վարժարանաց Պատգամաւորութիւնք որչափ կարելի էր կարգաւ շարուեցան դադաղին շուրջն, և դասին ետեւի շրջափակը լցուեցաւ ազգային Երեսփոխանական և Քաղաքական ժողովոց, Խորհրդոց, Հոդաբարձութեանց և հայ հասարակութեան ընտրելագոյն մասին ներկայացուցիչներով։

Հոդեհանդստեան պաշտօնը վերջացաւ 6 ½ին։ Այս միջոցին եկեղեցին լցուած էր՝ հակառակ ամեն կարգադրութեանց՝ բուռն զօրութեամբ ներս խուժող բազմութեամբ մը, և միայն տաճարին մէջտեղը միջոց մը բաց թողուած էր, հետզհետէ եկող հրաւիրեալները պատշաճապէս հիւրընկալելու համար։

Յայնժամ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազան խոսին լուութեան մը մէջ բեմն ելնելով, լաւ ներշնչմամբ գեղեցիկ դամբանական մը խօսեցաւ հոդելոյս Պատրիարքին վրայ, դամբանական մը որ երեք քառորդ տեւեց, և որոյ մանաւանդ վերջին մասը յուզեց ունկնդիրներն։

Պերճախօս բեմբասացն իրեն բնաբան ընտրած էր Դատաւորաց գրքին սա խօսքը. Եւ ժողովուրդն ելաց լալով ոգի, և ասէր. Արդարեւ այդ ոգի անկա՝ յիսրայել։

«Արդարեւ մեծ մարդ մը կորոյս հայ Ազգը, մին այն մեծ մարդերէ զորս դարերը միայն կը ծնանին։ Մեծ մարդիկ Ազգի մը յոյսն են, հաւատքն են, ապագայն են, ապաւէնն են։ Այսպիսի ոմն կորուսինք և մեք»։

Խորէն Սրբազան ցուցուց Ներսէս Պատրիարքին մեծութիւնը, բացատրելով ճարտար բանիւք թէ ի՛նչպէս գիտցաւ թարգման հանդիսանալ հայութեան բաղձանաց վասն իւր ապագայ բարեկարգութեան։ Ներսէս ի հանդէս բերաւ ցայն վայր Պատրիարքաց համար անծանօթ եղած բարձր զգացումներ։ Բարձր իտէալ մը դրաւ Ազգին առջեւ, և ժամանակին բարեդէպ առիթներէն օգուտ քաղելով աշխատեցաւ այդ իտէալին իրագործման համար։ «Ականատես և ականջալոյ եղայ իւր գործոց, որոմք նոր ճամբայ մը բացաւ Ազգին առջեւ, ճամբայ մը որ կը տանի դէպ՝ օրէնք և իրաւունք։ Օրէնք և իրաւունք էին իւր կէտ նպատակին, և պիտի լինին միշտ Ազգին կէտ նպատակին։ Ազգ մէջ է ամեն ազգի զարգացում։ Շատ տաղնապալից ժամանակի մը մէջ հանդիսացաւ քաջ հովիւ, և Հայաստանեայց Եկեղեցւոյ արժանաւոր Հայրապետ, որով մեր նախնի մեծանուն Հայրապետաց կարգին մէջ դրաւեց նշանաւոր տեղ մը։ Ազգին և Եկեղեցւոյն համար բարիք մ'եղաւ երեւումն այսպիսի հայրապետի մը։ Ինք ո՛չ միայն Ազգին զգացումները բարձրացուց, այլ և օտար ազգաց քով բարձր համարում շահեցաւ, և բարձր համարում շահեցուց իւր Ազգին համար։ Եւ եթէ ճշմարիտ և համարձակախօս թարգման հանդիսացաւ Ազգին բաղձանաց, հաւատարիմ եղաւ միշտ Օսմանեան մեծախառ Գահուն, և իրեն անյեղլի սկզբունք դրաւ՝ Հայ Ազգին բարօրութիւնը փնտռել Օսմանեան Տէրութեան

հայրական հովանուոյն ներքեւ, զոր Տէրն անսպակաս ընէ»։

Խորէն Սրբազան նկարագրեց Պատրիարքական պաշտաման դժուարութիւններն։ «Ոսկեղօծ կ'երեւի այս գահ, ըստ մատնանիշ ընելով պատրիարքական այրիացեալ Աթոռը, բայց փուշեր գտաւ անոր վրայ Ներսէս Պատրիարք։ Իւր նպատակներ և իւր արարք սխալ մեկնուեցան, զրպարտութիւնք և չարախօսութիւնք լսելի եղան, որք հասան մինչեւ մեր Օգոստափառ Ինքնակալին ականջը։ Բայց Աստուած օրհնէ զՍուլթան Ապտ-իւլ-Համիտ Խան, որ լաւ հասկցաւ Ներսէս Պատրիարքին սիրտը, գնահատեց նորա խորհուրդներն և զգացումներն, և վարձատրեց նորա հաւատարմութիւնն։» Ատ Սրբազան բեմբատացն աղօթքներ ըրաւ վասն բարօրութեան մեր Վեհապետին որոյ դպրաց դասն և ժողովուրդն ամէն ըսին։

Ապա նկարագրեց Ներսէս Պատրիարքին անձնական ձիրքերն, իբրեւ խոնարհամիտ և հեզահամբոյր մարդ, եկեղեցական անընդունակ վարիւք և օրինակելի բարիւք։ Յիշեց նորա խոնարհ ծագումն իբրեւ վարժապետի մը որդի, և յոյժ երիտասարդ հասակի մը մէջ եկեղեցական երիցագոյն կարգերու արժանանալը վերագրեց նորա անձնական ընտիր հանդամանաց։

Ատենաբանն յայտնապէս յուզեալ էր երբ ակնարկեց իւր անձնական վաղեմի բարեկամութիւնն ընդ հոգելոյս հանգուցելոյն։ Յիշեց թէ ի'նչպէս օտարութեան մէջ, ի Պուքրէշ, իրարու բարեկամացած էին, երբ Ներսէս 25 տարեկան վարդապետ ո'էր տակաւին, յուսալից և շնորհալից։ Ո՞վ կրնար մտածել թէ այսպէս շուտ պիտի չիջանէր Եկեղեցւոյ այս նոր աստղն։ Ատենաբանն կրկնեց թէ գործակից և սքանչացողն եղած էր նորա մեծագոյն դաղափարին, ազգին ապագայի մտածութեան, և թէ միայն այս դաղափար բաւական էր Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետաց կարգին մէջ երեւելի տեղ մը տալու հանգուցելոյն և դայն մեր մեծագոյն Պատրիարքաց մին հանդիսացնելու, եթէ չունենար իսկ ուրիշ դաղափարներ և գործեր։ Ներսէս նպաստեց այն դաղափարաց զորս ժամանակն իրեն հետ կը բերէ ժողովրդոց մէջ։ Հայ Եկեղեցին չնդուներ բնաւ այն նոր դաղափարներ որոց նպատակն է ժողովրդոց բարեկեցութիւնն և ազգութեան պահպանումն։ Հայաստանեայց Եկեղեցին քրիստոնեայ եկեղեցեաց մէջ ամենէն ազատամիտն և ներողամիտն է։ Ատենաբանը չեշտեց այս խօսքեր՝ օտարազգի հիւրերուն դարձած, որոց ամենքն ալ շատ ուշադրութեամբ մտիկ ընել կը թուէին։ Հայաստանեայց Եկեղեցին կ'օրհնէ նաեւ Հանդուցելոյն նման Հայրապետ մը, որ այնպէս հաւատարիմ մնաց ազգութեան դաղափարին, հաւատարիմ մնալով հանդերձ զմեզ հովանաւորող Վեհապետին, որուն համար նոր մաղթանքներ ըրաւ Խորէն Սրբազան։

— «Բայց Ներսէսի մահուամբ մեռած չեն իւր դաղափարք և խորհուրդք։ Նա յաճախ կ'ըսէր թէ «իմ վրաս յոյս մի' դնէք, բայց ազգին վրայ դրէք ձեր յոյսը»։ Մեծ է մեր կորուստը, բայց չյուսահատինք։ Ազգ մը կ'ապրի այնչափ, որչափ արժանի է ապրելու։ Երկիւղածութեամբ պահենք հոգելոյս Հանդուցելոյն յիշատակն, շարունակող լինինք նորա վեհ խորհրդոց, հաւատքով, յուսով և սիրով գործակցինք ազգային բարօրութեան գործին, թէպէտ երկար ժամանակ չվայելենք այլ եւս Ներսէս Սրբազանի նման Պատրիարքի մը հովութիւնն եւ առաջնորդութիւնն, որով տասն տարի, շատ դժնդակ պարագայից մէջ, հովուեց եւ առաջնորդեց մեզ»։

Գոհութեամբ յիշեց օտարազգի և մինչեւ իսկ ոչ-քրիստոնեայ հիւրերու ներկայութիւնը զոր վերագրեց Հանդուցելոյն շահած ընդհանուր ժողովրդականութեան, և ազգութեան դաղափարին հաւատարիմ մընացող այլակրօն Հայոց վրայ խօսելով, որոց ներկայացուցիչները կը տեսնէր «նդ, գովեց անոնց ազգային ձգտումներն, որք նոր դրդիռ մը ստացած էին Ներսեսի պաշտօնավարութեան միջոցին։

Ատենաբանն նորէն աղօթքներ ըրաւ մեր Վ.Հ. Ինքնակալին, Կայսերական կառավարութեան, և յանկէ յանուանէ Բարձր. Սայիտ փաշային և այլ նախարարաց համար, որք բարեհաճեցան ամեն թոյլտուութիւն ու դիւրութիւն շնորհել այս հոգեհանդիսաեան և յուղարկաւորութեան արարողութեանց։

Ի վերջոյ, իւր խօսքն ուղղելով առ հան-

դուցեալ Հայրապետն, պերճախօս բեմիա-սացը սրտայոյզ եղանակաւ վերջացուց դամբանականն։

Ժամ 7ը քառորդ անցած, Թափոր կազմուեցաւ, և դագաղն որ այս միջոցիս պըսակներու և խաչերու ներքեւ ծածկուած էր բոլորովին, դուրս հանուեցաւ՝ որոշեալ շաւղին համեմատ փողոցներու մէջ շրջելու համար։ Թափորին տաճարի մէջ կազմուելեան միջոցին հանդիսի բարեկարգութիւնը նորէն խանգարեցաւ։ զի Կարդադիր Մանանախմբի անձնուէր անդամը, ամեն ջանից հակառակ, անկարող էին զսպել ժողովրդային բուռն հոսանք մը որուն կը բախէին ամեն շարժման մէջ։ Ամբոխն, արդարեւ, այս միջոցիս ըստուարագոյն զանգուած մը ստացած էր, այնպէս որ մարդ իւր ոտքը դետնի վրայ դնելու համար իսկ տեղ չէր դտներ, և կոհակներու պէս դիրար մղելով կը տարուբերէին հաղարաւոր հանդիսականք ամեն դասէ, ի բաց առեալ կանայք և տղայք, զորս ըստ կարի ջանք եղած էր եկեղեցիէն ներս չընդունիլ։

Թափորն, ըստ կանխորոշ կարգադրութեան, կազմուեցաւ սա պէս։

Առջեւէն բարապաններ, քէհեաներ, մըդտարներ և քաղաքային պաշտօնեայք։ Բ. Դրանէն և Քաղաքապետութենէն եկած բազմաթիւ սպասաւորք (խոռէմ) կընթանային թափորին առջեւէն և քովերէն։

Ապա դպրոցական տղայք. մէն մի խումբ իւր պսակը կամ խաչը կը կրէր։

Ապա պատգամաւորութիւնք, իրենց պըսակներով։

Ապա դպիրք և երգեցիկ մանկունք։

Ապա Պատրիարքական Փոխանորդ Հայրն սգակիր, որոյ առջեւէն կերթային Տ. Վահան վարդապետ՝ հոդ ելոյս Պատրիարքին թագը կրած. Յակոբ Աշտ վարդապետ՝ Պատրիարքական դաւազանը կրած՝ սեւ քողով ծածկեալ։

Տ. Եղիշէ վարդապետ՝ թաւշեայ բարձի մը վրայ չքանշանները կրած։

Սգակիր վարդապետներ կընթանային դագաղին առջեւէն։

Դասք եկեղեցականաց կը շրջապատէին դագաղը։

Երգեցիկ մանկանց ուրիշ խումբ մը կը քալէր դագաղին երկու կողմերէն։

Ապա կուդար դագաղը, զոր բարձած էին կիսազգեստ և սաղաւարտակիր 12 քահանայք։

Կը հետեւէին Ազգային ժողովոց և պաշտօնական մարմնոց սգակիր պատգամաւորութիւնք.—Եպիսկոպոսունք, Երեսփոխանք, անդամք Վարչութեան, Թաղական խորհուրդք պաշտօնատարք եւայլն։

Ասոնց հետ կերթային օտարազգի եկեղեցական և աշխարհական հրաւիրեալք։

Թափորին երկու կողմէն կերթային զինուորներ և ոստիկաններ՝ աշխատելով բարեկարգութիւն պահել ըստ կարի։ Կարգադիր Մանանախմբի անդամք բազմաթիւ օգնականներով թափորին մէջ կարգ կը պահէին։

Խուռն բազմութիւն ժողովրդեան կը հետեւէր թափորին, և ամեն կողմէ կը պատէր զայն։

Այս ուղեւորութիւն տեւեց մէջդ 2 ½ ժամ։ Թափորը, ժամ 7 ½ ին մեկնած, 10 ին քառորդ մնացած վերադարձաւ։ Նոյն միջոցին, Գումգափուի թէ՛ հայ և թէ՛ յոյն եկեղեցեաց զանգակները կը հնչէին։ Երբ թափորն հասաւ Ցունաց Ս. Թորոս եկեղեցւոյ առջեւ, զգեստաւորեալ յոյն քահանայք դուրս ելնելով ընկերացան թափորին, Ֆէնէրի Պատրիարքարանէն զրկուած եկեղեցականաց և աշխարհականաց հետ, որք արդէն մտած էին թափորին մէջ։

Կ. Պոլսոյ բոլոր հայ եկեղեցեաց զանգակներն կը հնչէին առաւօտէն մինչեւ երեկոյ, ինչպէս նաեւ Բոլորքականաց ժողովարաններուն։

Այն երկայն շաւղին վրայ, բոլոր փողոցները, պատուհաններն և Հիսար-Տիպլի կիսաւեր պարիսպները մարդկային գլխովք ծածկուած էին, որոց թիւն 30-40 հազարէն պակաս չէր անշուշտ։ Բոլոր Պոլիս Գումգաբու փոխադրուած էր։

Ժամ 10 ին արարողութիւնք վերջացան։ Դագաղը ի տես հասարակութեան դրուեցաւ Մայր Եկեղեցւոյ այն մատրան մէջ, ուր է մկրտութեան աւազանը։

Պաշտօնական ընդունելութիւնք Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ կատարեցան արժանավայել մեծարանօք, և Գեր. Խորէն Նարպէյ Սրբազան իւր հանրածանօթ քաղաքավարութեամբ ու կենցաղագիտութեամբ պատուարեր կերպիւ կատարեց զայս պաշտօն։

Մինչ թափորը կը չրջէր, քանի մը հիւրեր եւս եկան որք եկեղեցին չիջան, ու Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ ընդունուեցան։ Ասոնց մէջ էին Բարձր. Մավրոյէնի փաշան և իւր որդին Ալէքսանդր պէյ, զորս արժանավայել յարգանօք ընդունելով, խօսակից եղաւ Դեր. Խորէն Նար պէյ սրբազան, ինչպէս նաեւ հանդուցեալ մեծանուն Զարիֆիի որդին Լէոնիտաս էֆէնտի Զարիֆի, որ իւր մօր և իւր անուամբ շքեղ պսակ մը բերած էր, որ դադաղին վրայ դրուեցաւ, երբ թափորն եկեղեցին կը մտնէր։ Մավրոյէնի փաշա թափորին հետեւեցաւ բաւական տեղ։

Յուղարկաւորութենէն յետոյ, ինչպէս յիշեցինք, դադաղը դրուեցաւ Մայր Եկեղեցւոյ մէջ, ուր կիրակիէն մինչեւ չորեքշաբթի խուռն բազմութիւն ազգայնոց եւ օտարազգեաց կը դիմէին յաջհամբոյր։ Թաղման հանդէսը կատարեցաւ չորեքշաբթի, դարձեալ մեծ շքով եւ ի ներկայութեան հազարաւոր ժողովրդեան։ Առաւօտուն Ազգային ժողով դումարելով, Ատենապետ Տիգրան էֆէնտի Եուսուֆեան սրտառուչ դամբանական մ'արտասանեց եւ մէկ ամսուան համար փակեց նիստն ի նշան սգոյ։ Ապա Երեսփոխանք խմբովին դադաղին շուրջն երթալով, պսակ մը մատուցին։

Ժամ 5½-ին սկսան հոգեհանդիսաեան աղաղակութիւնք զոր կը կատարէին Երուսաղիմայ Ս. Պատրիարքն եւ եպիսկոպոսունք եւ բոլոր եկեղեցական դասն, զգեստաւորեալ։ Մարմինն ամփոփեցաւ Մայր Եկեղեցւոյ մեծ Տաճարի աջակողմեան դաւթին մէջ և դարձեալ բազմաթիւ պսակներ դրուեցան դերեզմանին վրայ։ Եօթն օր Ս. Պատարագ պիտի մատուցուի և մաս մաս հողը պիտի ծածկուի։

Ահաւասիկ հոգելոյս Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր վերջին դէրն, զոր ուղղած էր առ Ազգային ժողովն այն օրն իսկ յորում աւանդեց հոգին.

«Առ Վսեմ. Ատենապետ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ.

Թղթոյս կից երեւելի բժշկաց վկայագրէն յայտնի է որ անկարելի է նուաստիս պատրիարքական պաշտօն վարել այսուհետեւ, ո՛չ գործնապէս և ո՛չ անուանապէս, զի արդիլեալ է մբտօք, որպիսի յուզուիլ, խորհիլ, մտածել, կարդալ, գրել և ն։

Արդ, խնդրեցի Ազգային վարչութեան կրօնական և Քաղաքական ժողովներէն որ նախ իմ երախտագիտական զգացումներս բարեհաճին դնել առ ոտս Դահոյից Օգոստափառ Վեհապետին մերոյ՝ որ իմ երկարժամանակեայ պաշտամանս միջոցին զիս սփոփեց և մխիթարեց կայսերական անդին համակրութեամբ, շնորհօք և պատիւներով, և վերջերն իսկ Իւր անձնական բժշկապետ Վսեմ. Մավրոյէնի փաշա երկիցս ղրկեց՝ հիւանդութեանս վրայ ցաւ յայտնելով, որում թէ՛ նբւաստս և թէ՛ սիրելի Ազգս տարակոյս չ'կայ, որ հաւատարիմ եղած եմք և պիտի մնամք ցիսպառ։ Յետոյ բարեհաճին յայտնել իմ խորին շնորհակալութիւններս Բարձր. Մեծ Եպարքոս Լուսամիտ Սայիտ փաշային՝ որ քանիցս վշտակցութեան հարցափորձ ըրած, և ապա իւր կողմանէ բարձրաստիճան պաշտօնատար մը ղրկած է՝ իւր կարեկցութիւնն յայտնելու. յայտնել նաեւ Ներքին, Արտաքին և Դատական գործոց Բարձր. Նախարարներուն իմ շնորհակալութիւններս, և այն ամէն օտարազգի պաշտօնատարաց՝ որք քանի քանի անգամ յատուկ պատուաւոր պաշտօնատարներ ղրկեցին տեղեկանալու համար հիւանդութեանս մասին։

Ապա խնդրեցի նաեւս հաղորդել իմ շնորհակալիքս Ցունաց պատ. Ազգին այժմու և նախկին Սմեն. Սրբազան պատրիարքաց, Ս. Սինոդին և Պատրիարքարանին, Վսեմափայլ Բարթէօսաօրի փաշային, Աշնուափայլ Տիկին Ժորժ Զարիֆիին, Հռոմէական և Բողքական ազգայնոց, և մասնաւորապէս

պէս Աղարեան Դերերջանիկ Ս. Կաթողիկոսին և Պուլկարաց Ամեն. Էկզարքին, Ասորւոց Դեր. Դիոնէսիոս Եպիսկոպոսին, ինչպէս նաև Հրէից Դեր. Խախամագլխին, և Վսեմ. Կոմս Քամենտոյին՝ որ չմոռցան զիս բնաւ, և որք կամ անձամբ այցելեցին և կամ իրենց կողմանէ եկեղեցականներ, պաշտօնատարներ, մինչև իսկ ճարտար բժիշկներ ղրկեցին։

Նաև բարեհաճին յայտնել իմ յաւիտենական անսահման շնորհալութիւնս զիս դարմանող ճարտար բժշկաց. բացի իմ վաղնջուց և բազմաբախտ բժիշկներէս Տոքթոր Սէրվիչէն էֆէնտի և Տոքթոր Փէշտիմալճեան էֆէնտի, և մասնագէտ ակնաբոյժ Տոքթոր Աճէմեան էֆէնտի, որոց անձնուիրութիւնը, սէրը, դութը և անդուլ խնամքները չպիտի մոռնամ յաւիտեան, յանհունս շնորհապարտ կը մնամ Տոքթոր Աղասեան, Տոքթոր Սէվէան պէյ, Տոքթոր Խորասանճեան, Տոքթոր Շիշմանեան, Տոքթոր Մանսի, Տոքթոր Ստեփան փաշա Ասլանեան, Տոքթոր Մահէ, Տոքթոր Մորթման, Տոքթոր Միւհլիւկ, Տոքթոր Բոլ տը Ռէյ, Տոքթոր Լէֆթէր փաշա, Տոքթոր Յակոբ պէյ Խանտանեան, Տոքթոր Քիրեաքու, Տոքթոր Հիւնքեարպէյլէնտեան, Տոքթոր Օրմանեան եղբարք, Տոքթոր Գալստեան, Տոքթոր Մինասեան էֆէնտիներու։

Իսկ Մեծ. Տոքթոր Զամպաքոյին մարդասիրութիւնը և խնամքը անմոռանալի բարերարութիւն մ'է, և արժանի յաւերժական շնորհակալեաց։

Իսկ դուք, բարեհաճեցէք յայտնել իմ անսահման շնորհակալութիւններս, մանաւանդ առ Հայոց սիրեցեալ Աղգն, առ պատկառելի Աղգային Ժողովն, առ ամենայն ժողովս և խորհուրդս, առ ամենայն պատուարժան եկեղեցականս և աշխարհականս թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ գաւառաց՝ որք իրենց ցաւակցութիւնն և կարեկցութիւնն ցուցին այցելութեամբք, հեռագրութեամբք, և գլխաւորապէս առ Աստուած, առ Տէրն Մահու և Կենաց՝ ջերմ աղօթիւք։ Իմ զգացումներս բացատրելու ո՛չ կարողութիւն ունիմ, ո՛չ միջոց և ո՛չ խօսք. Աստուած Ինքն հաստուցանէ ամենեցուն վարձս բարեաց Իւր անհուն ողորմութեամբն։

Արդ՝ առանց նուաստիս երկար խօսելու և մտածելու հարկ թողլոյ՝ կը պաղատիմ որ, Աղգային ժողովն անմիջապէս ընդունելով հրաժարականս, ինձ յաջորդ մ'ընտրէ, որուն ի սրտէ կարողութիւն և յաջողութիւն կը մաղթեմ։ Այս է կամք Տեառն, որ է և լիցի միշտ օրհնեալ։ Եթէ Աստուած Ինձ կեանք շնորհէ, և եթէ յայսմհետէ ապրիմ, այն ալ միմիայն Օգոստափառ Կայսեր և սիրելի Աղգիս աղօթելու համար յատկացեալ է։

Մնամ աղօթարար սիրելի և
օրհնեալ Աղգիս
ՆԵՐՍԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

15 Հոկտ. 1884
Կ. Պոլիս, Օրթագիւղ

ՎԷՊ

ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ

(Շարունակութիւն և վերջ)

Լ.

Երկրորդ օրը իմացայ որ Բոպէր նախորդ ցերեկ պիս երկայն ժամանակ ոպասեր էր ամենայն հանդարտութեամբ։ Սակայն և այնպէս քանի որ օրը տարաժամիլ սկսեր էր, մտատանջութեան մէջ իյնալով և մոլորած ըլլալուս համոզեալ՝ դուրս ելեր էր ինձ հանդիպելու յուսով։ Քանի մը անգամ ետ դարձեր էր, մի գուցէ պանդոկը վերադարձած ըլլամ. բայց պիս հոն չգտնելով, երթալով աւելի յուզեալ վիճակի մէջ դուրս ինկեր էր, այլ և այլ ուղղութեամբ խնդրակներ հանելով ինձ համար։ Այդ դուրսը գտնուած մէկ միջոցին՝ նամակս հասեր էր և իւր դարձին չէին կրցեր ոևէ ծանօթութիւն մը տալ իրեն՝ թղթաբերին անձին նկատմամբ։ Ընթեռնլուն պէս այդ իմ տոմակս, կրակի պէս պանդոկէն դուրս ելեր և բոլոր գիշերը քաղաքին փողոցներուն մէջ թափառեր էր։ Յաջորդ առաւօտէն սկսեալ ամեն կողմ որոնել տուեր, մինչեւ իսկ հրաման ընդուներ էր ջրանցքին և գետին յատակը հետազօտել տալու բաւական հեռաւորութեամբ տեղ։ Շաբաթի մը չափ որ այդ քաղքին մէջ անցուց, կանոնաւորապէս իւր վրայօք տեղեկութիւն կ'առնուի, ի շնորհս աւադուհւոյն, որ իմ վրաս դթալուն՝ ամենայն զգուշաւորութեամբ անոր վրայ հսկել կուտար։ Վերջապէս պիս վերստին դտնելու ամեն յոյս կորսնցնելով և համոզուելով անշուշտ կենակոյլ եղած ըլլալուս՝ մեկնեցաւ։

Տաներէցին աղաչելի դաղտնապէս Վիլֆիերնկի աւադերէցին դրելու, և անկից իմացայ որ Լուիզ հօրը հետ քաշուած դիւղը կը բնակէր և ոչ իսկ իրեն մերձաւորագոյն ազդականներուն տեսնուելով։ Քանի մը ծեր բարեկամներ միայն ատեն ատեն կ'ընդունուէին։ Լուիզ ինքնին շատ հիւանդ էր և երկայն դահաւորակին վրայէն չէր ելներ։ Մեր վախտեան ժամանակէն արդէն յոլի մնացած էր, բայց ոչ ոք կասկածեր էր և թերեւս ինքն անդամ վերահաս չէր եղած։ Կրնաք երեւակայել մեր մտատնութիւնը ինչպիսի հարուած մը տուաւ այդ փափուկ հոգւոյն՝ ճիշդ այն պահուն յորում կրկին կեանք իւր մէջը սկսեր էին արթննալ։ Երթալով կը նիհարնար և կը տարակուսէին թէ իւր ցանկալի բեռը կարենայ ողջամբ ի դը-ըլուս հանելով արտադրել։ Այս լուրերը թէև ալեկ չէին, սակայն դիս քիչ մը հանդարտեցուցին։ Լուիզ դեռ ողջ էր. աւադերեցը կը յաւելուր գրելու թէ Բոպէր Ոչ Բարիզ դանուելուն վրայ դինքը ապահովցուցեր էին, բայց աւելի բան մը չէր գիտեր։

Երկայն ամիսներ անցան յորում ցաւադին կերպով իմ նոր կենացս սոլորեցայ. շատ առանձին էի։ Կուսանաց սրբութիւնը դիս կը վհատեցնէր և վրանին ունեցած յարգանքս դիս իրենցմէ հեռու կը կեցնէր։ Ընդհակառակն դիս չջնապատող կանայք, իմ թշուառութեանս ընկերները, անյաղթելի հակակրութիւն մը ինձ կ'ազդէին. այդ հասարակ կերպարանքները՝ մեծաւ մասամբ պատիւներնին կորսնցուցած, լկտի և անտերս՝ ինձ սակում կը պատճառէին։ Սկիզբները ջանացեր էին դիս հրապուրելով իրենց ճգելու, իրենց դժբաղդութեանց պատմութիւնները ինձ վստահանալով. բայց իմ վայրենի լռութեանս առջեւ վերջապէս ճանձրացեր էին և ալ ինձ կը փախչէին։ Դրսէն լուր մը չէի առնուր. ինձ այնպէս կը թուէր որ այն քաւութեան կայանքներու մէջ կը դտնուէի, յորում երկրիս աղմուկն ու ժխոր կը դադրին, և յանցաւոր հոգիները թողութեան ժամուն կը սպասեն։ Աշխատիլ սովրեցայ, առաւօտէն սկսեալ կարկահիս վրայ ծռած, կամ հասարակ կարի մը դբաղած, նիւթական դբաղումամբ խոհական մասս կը քնացնէի։ Գիշերները մանաւանդ դլխաւորապէս ինձ ատելի էին. այդ կենակցութիւնը քան դիս թերեւս նուազ յանցաւոր, բայց աւելի սորնացած էակաց հետ՝ ինձ անյաղթելի խորշում մը կ'ազդէր։ Այդ կանայք զանազան դասերու բաժնուած են. աւելի երիտասարդուհիները՝ զորոնք միմիայն խոհեմութեան համար կը փակեն, խնամքով կը զգուշացնեն միւսներուն հետ յարաբերութիւն ունենալէ։ Ցատուկ դաս

մ՚ալ կայ իրօք ապաշխարող և զղջացած աղջկանց համար, որոնք շատ տարիներէ ի վեր ուրիշներուն բարի օրինակ կուտան և չեն ուզեր այդ տունէն հեռանալ։

Ես Բայէներուն մէջ կը դտնուէի ինչպէս որ կը կոչեն իրենք նորեկները, որոնք իրենց դեռ նոր և հաղիւ թէ նուաճած կրքերովը յուզեալ և մեծաւ մասամբ իրենց ազատութիւնը ձեռք ձգելու փափաքող են։ Նոյն իսկ դեռ մոլութիւնն է ինքնին քստմնասարսուռ, զիրենք տեսնելով և մոխիկ ընելով՝ կը զզուէի, բայց պէտք էր իրենց մէջ մնայի։ այդ տեսիլը փրկաւէտ էր ինձի համար։ Ահ, եթէ գիտցուէր ընկերականութեան ստորին դասերու մէջ ի՛նչ կերպարանք կ՚առնուն այդ կիրքերը զորոնք շատ անգամ մենք աշխարհիս վրայ մտացածին բարձրութեան մը կը հանենք։ Շատ ժամանակ անցաւ մինչեւ որ ես խոստովանեցայ թէ հպարտ Մատէէն իսկ ինքնին այդ տիպին ու կաւին մէկ մասն էր, յորում դեռ խսպառ չքնացող ախտք և մոլութիւնք լուելեայն իմ շուրջս կ՚եռային։ Սակայն տակաւ առ տակաւ խոնարհեցուցի գլուխս և աղօթել սովրեցայ։ • • •։

Առաւօտ մը նամակ մ՚ընդունեցայ Վիլֆէրնիյի աւագերէցին կողմանէ։ «Աստուծոյ ճանբաները խորհրդաւոր են, կը դրէր։ խաւարէն լոյս կը ծագէ և մեր արտասուաց աղբիւրէն նոյն իսկ մխիթարութիւն կը ցայտեցնէ։ Հօրեղբօրդիդ մանչ զաւակ մը ունեցաւ։ մինչեւ վերջին վայրկեանը կը վախնային որ զաւակը տեսնելու չափ չպիտի ապրի, բայց Աստուած իրեն այդ շնորհքը պարգեւեց։

«Ճգնաժամը սոսկալի եղաւ։ արտորնօք դիս կանչեցին։ Հայրը ներկայ էր մարմարիոնէ արձանի պէս ճերմակ և տժգոյն։ երբէք չպիտի մոռնամ այդ կերպարանքը։ Անթաց աչօք կը դիտէր իւր դուստրը և անոր ճակտին վրայ խորհրդաւոր ստուերներուն յառաջադիմութիւնը կը հետազօտէր։ ես անկողնոյն քով կ՚աղօթէի։ Քովի սենեկէն մերթ ընդ մերթ նորածին զաւկին նուազաձայն ճիչը կը լսուէր, միանգամայն և կանանց փափուկը։ Հիւանդին սենեկին մէջ ընդհակառակն ահաւոր լռութիւն մը կը տիրէր։ Ցանկարծ ելաւ նստեցաւ և վստահ նայուած մը մեր վրայ արձակելով, անսովոր հաստատամտութեամբ — «Իմ ամուսինս, ըսաւ, իմ ամուսինս կ՚ուզէի տեսնել»։ — Հայրը առանց պատասխանելու անձկութեամբ լի նայուածքով մը ինձ նայեցաւ։ երկուքնիս ալ միեւնոյն մտածութիւնը ունեցեր էինք, այսինքն թէ ցնորիլ սկսեր էր, բայց նա բոլորովին կանգուն նստած և միեւնոյն յստակ և հանդարտ ձայնով — «Կուզեմ զինքը տեսնել և անձամբ իրեն յանձնել իմ զաւակս», ըսաւ։ — Ցետոյ իւր բարձին տակէն փոքրիկ թղթապանակ մը առնելով զոր իրմէն բնաւ չէր զատեր, մէջէն խնամքով ծալուած թուղթ մը հանեց և ինձ երկնցուց։ Պ։ Ուոլին հասցէն էր և չեմ գիտեր ինչպէս ձեռք ձգեր էր։ — Տէր հայր, ըսաւ, կ՚աղաչեմ շուտ գնա, ըսէ իրեն որ զինքը կ՚ուզեմ, պիտի դայ, ապահով եմ, կը ճանչնամ զինքը։ շուտ գնա, ժամանակը ստիպողական է, պիտի ջանամ ապրելու մինչեւ որ հասնի։

«Նորէն բարձին վրայ ինկաւ գլուխը, աչքով հօրմէն խորհուրդ հարցուցի, կը տատամնէր և ներքին զօրաւոր կռուի մը բռնուած կարծես կը վարանէր։ վերջապէս նշան մ՚ըրաւ և մեկնեցայ։ Գիշեր էր երբ Բարիզ հասայ, Պ։ Ուոլին բնակարանը վազեցի։ սիրտս դողի մէջ էր, մի գուցէ հոն չգտնուի կամ թէ զիս ընդունել չուզենայ։ Անմիջապէս զիս քովը մտցուցին։ Պ։ Ուոլ ինձ ծերացած երեւցաւ, թէեւ իւր դիմաց արտայայտութիւնը միեւնոյնն էր՝ ինչ որ էր անցեալին մէջ։ Զգիտեմ թէ զիս ճանչցա՞ւ, բայց դրսէն այլայլութիւն մը չցուցուց, ոտք ելաւ, կանգնեցաւ և անխօս սպասեց որ իմ այցելութեանս պատճառը իրեն բացատրեմ։ Մաքէս անցուցեր էի կամաց կամաց զինքը պատրաստել իրեն ըսելիքիս։ իւր անհամբեր և հպարտ ձեւը միտքս փոխեց։ Երբ խնացաւ որ կինը հոգեվարքը էր և զինքը կ՚ուզէր, իսկոյն սարսռեց, երեսին դոյնը նետեց և շրթունքը դողացին։ բայց երբ լսեց որ զաւակ մ՚ունէր, ձեռքերովը երեսը ծածկեց։ — «Որդի՛ մը, ըսաւ, որդի՛ մը ունիմ»։ — Ցետոյ խորին և սրտառուչ ձայնով մը յարեց։ — «Ահ, խե՜ղճ կին, թշչ, ուա՜ռ Լուիզ»։

«Ցանկարծ գլուխը վեր վերցուց։ — «Երթանք տէր հայր, ըսաւ, երթանք շուտ։ Եւ առանց մէկու մը խօսելու, առանց վայր-

կեան մը կորսնցնելու, առջեւէս սկսաւ քալել։

«Ճանբան շատ մը հարցմունքներ ըրաւ ինձ իւր կնոջ և զաւկին վրայ։ կարծես թէ յիրաւի ջերմ ունէր։ Անդադար կառքին դռնէն կը ծռէր և գիշերուան մթութեան մէջ անհանդարտ աչքք կը խորասուզէր, յետոյ հառաչանք մը արձակելով ի սրտէ՝ յորում կարծես թէ բոլոր հոգւոյն զօրութիւնները և անձկութիւնները կը կեդրոնանային, «Կը յուսա՞ս որ ժամանակին հասնիմ», կը հարցնէր, և եթէ յանկարծ կարծէր որ իրեն ժխտեցի դինքը տեսնել այսպիսի վայրկենի մը մէջ։ «Ձեզի կը սպասէ», կը պատասխանէի իրեն։

«Գիշերուան ժամը երկուքը կը զարնէր գիւղին ժամատունը, երբ ամբոցին վերնադաւթին առջեւը հասանք։ Չմոռած կանգառաւ և թեւէս բռնելով «Կը յուսա՞ս որ գիտնայ ... տեղեկացած ըլլայ ... — կը տատամսէր և չէր կրնար խօսքը ամբողջացնել ... իւր միտքը հասկցայ։ — Կարծեմ հաւաստեօք ամեն բան գիտէ, ըսի իրեն, այս վերջին ժամանակներս աւելի ստէպ ստէպ արցունք թափելն ու լալն, որոնց համար մեկնութիւն մը տալ չէր ուզեր, անշուշտ սերտ կապակցութիւն պիտի ունենան այդ աղետալի տահուան բօթաբեր դուժին հետ որ շատ տարածուած է այս կողմերս։ Դարձեալ սարսռեց և թեւս թողլով արագ քայլերով սալայատակին վրայէն անցաւ ու դնաց մինչեւ անկիւն մը, ուր կանգնեցաւ չկնայելու համար և մնաց գլխակոր։ կարծես թէ մօտակայ բազմոցի մը վրայ ծանօթ հետք մը կը մնտռէր, ընտանի նշան մը որ մթութիւնը իրեն կ'արդելուր նշմարել։

«Կոչեցի դինքը։ ձեռքը քանիցս ճակտին վրայ տարաւ կարծես հոն քանդակեալ յիշատակ մը ի բաց վանելու համար, յետոյ աչուքները յառելով տուաջին յարկին վրայ մեղմիկ լուսով մը լուսաւորուած պատուհանի մը՝ մօտեցաւ յամրաքայլ։ Ներս մտանք, իմ մեկնելէս ի վեր հիւանդին սենեկին մէջ բան մը փոխուած չէր։ այնպէս մը կը թուէր թէ կը քնանար։ հայրը քովը նստած արձանի պէս անշարժ մնացեր էր, կարծես թէ զմեզ չտեսաւ։

«Բաւական ժամանակ մեր ճնշուած շնչառութեան ձայնէն զատ ուրիշ ձայն չը լսուեցաւ։ Մենէ ոչ ոք կը խօսէր և ոչ շարժմունք մ'ընելու կը համարձակէր։ վերջապէս Տիկին Ուոլլ՝ աչուքները բացաւ եւ տեսնելով իւր ամուսինը իրեն վրայ խոնարհած, անայլայլակ աչուքները անոր վրայ սեւեռեց, վախնալով որ մի դուցէ երազի մը պատրանաց ենթակայ ըլլայ։ Յետոյ թեթեւ մը շիկնեցաւ, անկողնին վրայ նստաւ եւ ձեռքը երկնցնելով՝ «Էդ՛դ Բոպէր» ըսաւ։ Նա ալ այդ փոքրիկ ձեռքը բռնելով ծունկ չոքած, տղու մը պէս սկսաւ լալ։ Ցայնժամ մայրը տղան բերել տուաւ և հօրեղբայրդ կանչելով, «Հայր իմ, ըսաւ, ահաւասիկ Թոդուիթիւն չնորհելու ժամանակը։ կը տեսնես՝ իմ յանցանքս է որ չկրցի սիրցնել տալ ինքդինքս, յուսամ թէ զաւակս ինէ աւելի երջանիկ ըլլայ»։ Յետոյ իւր ամուսնոյն դառնալով՝ «Բո՛պէր, ըսաւ, չտեսա՞ր իմ հայրս»։ Երկուքն ալ հասկցան առաջին անգամ ըլլալով՝ իրարու նայեցան և ողջունեցին։

«Քանի մը վայրկեան վերջը ջերմը եկաւ, յետոյ ցնորման վիճակը, կարծես թէ հոգեվարքութիւնն պիտի սկսէր, բայց տկար արարածը մահուան կընդդիմանար։ Նոյն գիշերը, յաջորդ օրը մեծ վախի մէջ անցուցին, ուրիշ գիշերներ, ուրիշ օրեր, ամբողջ շաբաթներ անցան։ Հայրը եւ ամուսինը դինքը բնաւ չթողուցին, վիճակը լաւագունի փոխուեցաւ՝ յոյսն և վստահութիւնը ի միասին բերելով։ ... Այս ամոյս երկրորդ շաբթուն մէջ ամենքն ի միասին Ամերիկա կը չուեն»։

Ուրեմն Բոպէրին երազած այդ ուղեւորութիւնը տեղի պիտի ունենար վերջապէս, բայց միայն նէ որ առաջ իրեն պիտի ընկերանար նէ միայն ետ կը մնար՝ մուցուած տուեր մը անցելոյն։

Նամակին թուականը նայեցայ, արդէն երկու շաբաթ առաջ ծովադնաց եղած էին։

Մարտ 18։

Ինը տարի անցան, ինը իրարու յար և նման տարիներ ուր օր մը միւսէն տարբերութիւն չունեցաւ։ իմ ընկերուհեացս կենակցութեան մէջ տարբեցայ, նոցա պէս կանոնաւորաբար անփոփոխ եւ հաշուեալ ժամերով՝ միօրինակ աշխատելով կամ աղօթելով։ Այսօր սակայն առանձնացած կապ-

րիմ. յանկարծական և երկարատեւ նուա-
ղելներս՝ շուրջս դանուողներուն մոռաց-
թեան նիւթ եղան և հասարակաց սրահնե-
րէն դիս հանեցին։ Խցիկ մը ունիմ ուր ցայդ
և ցերեկ առանձին կը նստիմ և առանձին
կը ճգնիմ, վոխվոխութիւն մ'է ի բարին զոր
ես չկնդրեցի, այլ զոր գոհութեամբ կը վա-
յելեմ։

Այս պատեհ առիթը գործածեցի յիշա-
չատակներս հաւաքելու և այս երկայն խոս-
տովանութիւնս գրելու։ Թերեւս ուրիշնե-
րուն համար օգտակար դաս մը ըլլայ. թե-
րեւս իմ աղէտիս, իմ խղճմտանքիս, իմ քա-
ւութեան պատմութիւնս՝ իմ սխալմանքս
գայթակղեցուցած անձինքս զէնընկէց ընէ
ինձ նկատմամբ եւ ողորմելով ինձ համար
աղօթեն. մեռելոց ներել դիւրին է, և այս
տողերս ընթերցած ժամանակնին՝ զանոնք
գրողը արդէն շատոնց աշխարհէս անհետա-
ցած պիտի ըլլայ։

Այդ մոխիրները խառնելը շատ ծանր
նստաւ սրտիս, սակայն և այնպէս ամենայն
ինչ անկեղծաբար պատմեցի։ Պաշտօնս ընդ-
ունած է. այնպիսի հոգեկան կենաց պայման-
ներ կան որոնց վրայէն ժամանակը ի զուր
կանցնի, ո՛չ նորութիւն մը կը բերէ և ո՛չ
հինէն բան մը կը տանի։ Քսան տարի ալ
ապրելու ըլլամ, մինչեւ հիմա դրածներուս
վրայ ոչ մի նոր զգացում մը պիտի կարե-
նամ աւելցնել և ոչ ալ դիտողութեան ար-
ժանի դէպք մը յիշատակել։ Ալ բան մը չեմ
փափաքիր, և ոչ իսկ մեռնիլ...։

8 Մայիս 18..

Ամէն բան ընցած կը կարծէի. կը խաբ-
ուիմ եղեր. անակնկալ լուր մը թմբրութե-
նէս զիս արթնցուց։ Կը դառնան։ Լուիլ
նամակով մը կաւետէ իրենց մօտալուտ վե-
րադարձը ի Վիլֆէրնի։ Երջանիկ են, իւր
խօսքովը։

Ինչո՞ւ այս յուզմունքս. կարծէի որ սիր-
տս մեռած է ամեն բանի համար, և սա-
կայն ինչէն է որ կը դողայ անոնց մօտենա-
լովը. ինձ կըսեն թէ Լուիզ իւր հօրը վրայ
կը խօսի որ իրենց կընկերանայ եւ երթալով
կը ծերանայ, յետոյ երկարօրէն իւր դա-
ւակաց վրայ կը խօսի որոնք երեք հատ են
առժամն։

Այս խցիկիս մէջ կը խեղդուիմ ես, կու-
զէի կարենալ քալել, վազել անդամ... զու-
ջանք. դարձեալ կիյնամ այս աթոռին վրայ
զոր ալ չպիտի թողում։ Բաց պատուհանէս՝
կուսանաց շատերը կը տեսնեմ որ պարտէ-
զին մէջ կը պտըտին հանդարտ երեսով, նոյն
իսկ ամենէն տարուքները թարմ և երիտա-
սարդական ժպիտներ կարձակեն. որքան դե-
ղեցիկ է սրբութիւնը, մաքուր կեանք, մա-
քուր սիրտ։

Ինձ աւելի մօտ ուրիշ աղաղակներ տա-
կանջիս կը զարնեն, կարկահիշ անդուլ դոր-
ծունէութեան աղմուկը, միանդամայն խիստ
և կշտամբող ձայներ... Ցայլներն են որ
կաշխատին... այդ է իմ ընտանիքս, արդ-
արդա՞ն Աստուած։

10 Մայիս 18..

Ո՛չ, այլ եւս այս խցիկէն չպիտի ել-
նեմ... և ոչ իսկ մինչեւ մատուռ կրնամ
երթալ քաշկռտուելով։

Հորիզոնս երթալով կամիսոսի։ Արդէն
այնքան սահմանափակ կը դառնի զայն՝ երբ
դեռ կարող էի ապաստանարանիս որմնա-
կին մէջ դեգերիլ։ Սահմանները պարուրե-
ցան։ Խցիկիս չորս պատերը և պարտէզին
ծառատնկոց վրայ նեղ և զառիչեղ նայուածք
մը, ընդարձակ տիեզերացմէ ահաւասիկ ինձ
մնացեալ բաժինը։ Անկարելի կը թուի որ
մարդկային էակ մը քան զայս նուազ տեղ
դրուէ եւ սակայն դեռ ես հանառօտել
պէտք է, երթալով պիտի նեղնայ մինչեւ որ
այս նիհարցած մարմնոյս ձիշդ չափը գըտ-
նայ, և այն պիտի ըլլայ իմ վերջին բնակա-
րանս։ Երբեմն իմ անքուն գիշերներուս
մթութեանը մէջ ինձ այնպէս մը կուգայ որ
պատերը երթալով իրարու կը մօտենան ու
կը կցին զիս իրենց մէջ սեղմելով։

Օրհասական ժամն մօտալուտ է... Քիչ
մ'առաջ՝ իմ բաց պատուհանիս քովը ատան-
ձին նստած էի, ինչպէս որ միշտ սովը եմ,
և պարզ ու անամոլ երկնային խորութեանց
մէջ չգիտեմ ինչպիսի չնաշխարհիկ տեսիլք-
ներ զիս յափշտակեալ կը տանէին երկրէս
հեռու։ Աչուքներս խոնարհեցնելով՝ սեւ
փայտին կոթնած ասպակիին վրայ իրր ի հա-
յելոյ՝ տեսայ կերպարանք մը որուն տեսքը
վրաս մեծ ազդեցութիւն ըրաւ. շատվանց
խոշորցած աչքեր, խիստ և ցաւալից բերան
մը, նիհարցած երես մը որուն զերդաք իւր

ճերմակ դլխանոցին կտաւին հետ կը խառնուէին։ Ուրիշ անդամ ուր հանդիպեր էի ես այս կինը. ապաշխարող կանանց դդեստին ձեւը հագած էր. ի՞նչպէս կըլլայ որ զինքը մինչեւ ցարդ չէի տեսած։

Հետաքրքրութենէս շարժեալ դարձայ նայեցայ, տժդոյն ստուերը ինձ դարձաւ։

Չի կրցի ժպիտս արդելուլ — ի՞նչ, դուն ես այդ, Մատլէն, ի՞նչ ըրիր երիտասարդութիւնդ, քու դեղեցկութիւնդ, խեղճ աղջիկ...

Տասը տարուընէ ի վեր այդ մռայլուած դէմքին՝ նորէն նայեցայ, կարծես թէ այլ ևս կենդանի էակի մը կերպարանք չէ։ Ո՛չ ոք աշխարհիս վրայ ալ կարող է ճանչնալ, ոչ ո՛ք. ըսած էի որ բան մը հետը չը տարած՝ ժամանակը կանցնէր. ընդհակառակն, ամեն բան տարաւ, բաց ի ցաւոյ։

12 Մայիս 18..

Եթէ Հավրը երթայի իրենց դարձին սպասելու... ապատ եմ, ուխտով մը կապուած չեմ. կը պահուըտէի վերջին անդամ մը զիրենք տեսնելու համար։ Իմ ներկայութիւնս՝ ինչէ՞ն կրնան կասկածիլ, և եթէ նոյն իսկ անմիջապէս քովէս քսուելով անցնին, այս շանթահար կերպարանքս միթէ կարո՞ղ է իրենց բան մը ըսելու։ Ամբոխին մէջ ինձ բախելով՝ ոչ մէկ զգացում կարող է արթննալ։ Կարծես թէ կը տեսնեմ զիրենք, հօրեղբայրս քիչ մը կորաքամակ, մայրը ճերմկցած, Լուիզ միշտ դեղեցիկ, մարմնոյն ձեւը սակաւիկ մի ընդլայնեալ, ինչպէս սովորական է մանկամարդ տիկնանց, երեք դեղեցիկ զաւակները իրենց հրեշտակային գլուխներով... Եւ ինքը... Ո՛չ, ո՛չ, չեմ երթար։

Երբ իրենք Ֆրանսայի ծովեզերքը ոտք դնեն՝ ես պիտի հասնիմ, այո՛, ուրիշ ափունքներ...։

13 Մայիս 18..

Ա՛լ անկողինս չեմ ելներ, ա՛լ առանձին զիս չեն թողուր. միշտ մայրապետներէն մէկը կը դտնուի իմ քովս և կ'աղօթէ։ Քահանայն այս առաւօտ եկաւ, երեկոյին պիտի վերադառնայ յետին աղօթքները ընելու համար, ես անձամբ ուզեցի...։

Անցեալ մը կայ որ զիս կը դրաւէ, և զոր չեմ կարող ինէ ի բաց վանել. կ'ուզէի գիտնալ թէ իրօք սիրա՞ծ է զիս, սիրա՞ծ է զիս արդեօք, աւա՜ղ, ինչպէս որ ես սիրեցի զնա... բայց ի՞նչ հոգս... ամենայն ինչ կատարեալ է... ննջէ՛ ի խաղաղութիւն, հէ՛գդ Մատլէն։

Բ. ԱԼՊԱՆ

ՎԵՐՋ

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ – 2 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱՐՏԱՔԻՆ

Վերջապէս Միացեալ Նահանգաց Նախագահական ընտրութեան արդիւնքն յայտնուեցաւ։ Ռամկավարականաց ընտրելին Պ. Գլիվլէնտ ընտրեցաւ. այս արդիւնք կարեւորութեան արժանի է, զի ընտրելով զՊ. Գլիվլէնտ ամերիկեան ժողովուրդը լոկ Նախագահ մը չփոխեր, այլ հանրավարականաց զօրաւոր կուսակցութիւնն որ իբր քառորդ դարէ հետէ կը վարէր Միացեալ Նահանգաց գործերը, պաշտօնէ կը ձգէ և նոցա տեղ կը դնէ Ռամկավարականները։

Նիւ Եորքի մէջ Ռամկավարականք մեծաւ ցնծութեամբ կը տօնեն Պ. Գլիվլէնտի յաղթանակն. բայց երկու կուսակցութիւններն գիրար կամբաստանեն ընտրական խարդախութեանց համար։ Այս երկու կուսակցութեանց իւրաքանչիւրն յանձնախումբ մը անուանած է, քուէից ճշդութեան վրայ հսկելու պաշտօնով։

Հանրապետականք ընդհանրապէս կը գովեն Պ. Գլիվլէնտի յաղթանակն։

— Անգլիոյ Երեսփոխանական ժողովն երրորդ և վերջնական ընթերցմամբ ընդունեց ընտրական բարենորոգման վերաբերեալ օրէնքը զոր Լորտերու ժողովը մերժած էր վերջին նստաշրջանին մէջ։

— Ռումանիոյ թագաւորն ու թագուհին երկու օր առաջ Բէլգրադ գնացին և Աւստրիոյ կայսեր այցելութիւն տալէ յետոյ, Պուքրէշ ուղեւորեցան։

— Նոյեմբեր 5ին Պ. Հիրշ Վիէննայի Օսմանեան դեսպան Սատուլլահ վաշայի մատոյց իւր պատասխանն Բ. Դրան վերջնագրոյն. բայց խնամոն յայտնի չէ տակաւին։ Մայրաքաղաքէս կը հեռագրեն առ Թայմզ թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեր է հրամայել որ երկաթուղեաց գրաւումն ետ մնայ և խնդիրը կառավարութեան խորհրդոց մէջ նորէն քննուելով, օ՛րևէ միջոց ի գործ դրուելէ առաջ տեղեկութիւն հաղորդուի Իր Վեհափառութեան։

— Թայմզի թղթակիցը կը հեռագրէ Բեռլինէն թէ Զարին կենաց դէմ նոր և յանդուգն դաւադրութիւն մը գտնուեր է, երբ արդէն հասուն վիճակի մը եկած էր, բայց պարագայք տակաւին ո՛չ ուժեք ծանօթ են։

— Բոլերան Բարիզի մէջ կը ճարակի երկու շաբաթէ ի վեր. ի սկզբան շատ աւելի կոտորած կը նէր քան այժմ։ Անցեալ երկուշաբթի Բարիզու մէջ քոլէրայէ մեռնողներու թիւը կը հանի 98ի և երեքշաբթի 89ի։ Ֆրանսայի այլ և այլ քաղաքաց մէջ ալ, ի Մըլէօն, Նանթ և Թուլոն, օրն 3–4 մահ կը պատահի քոլէրայէ։

— Սըր Իվին Պէրինկ հեռագիր մը ստացաւ Լորտ Ռոսլիէն ի Տոնկոլա, ծանուցանող թէ բնաւ հաստատութիւն գտած չեն այն զրոյցք թէ Կորտոն գերի ինկեր է ապըստամբաց ձեռք և Խարդում դրաւուեր է։

— Ջինասատանէն և Թոնքինէն առնուած վերջին տեղեկութիւնք կը ծանուցանեն Ջինական նորանոր յարձակումներ ի Թոնքին և ի Բէլունկ, յարձակմունք որք յետս մղուեցան։

— Անգլիոյ Թղթատարական Նախարար (կոյր)՝ հանրածանօթ Պ. Ֆաուսէթ մեռաւ Նոյեմբեր 6ին ի Լոնտոն։

— Նոյն դիշերը մեռաւ նաեւ Բարիզի առողջապահական վարչութեան ընդհանուր քննիչ Տօքթ. Ֆովէլ։

— Լորտ Նորթպրուք Լոնտոն հասաւ Նոյեմբեր 5ին։ Նախարարաց խորհուրդն արտասովոր նիստ մ՚ունեցաւ, որուն Լորտ Նորթպրուք ներկայացուց իւր տեղեկագիրն և բերանացի բացատրութիւններ տուաւ իւր պաշտօնին վրայ։ Անգլիական քանի մը լրագրեր կը հաստատեն հանրային կարծիքն որ կը վախնայ թէ այդ տեղեկագիր ընդհանուր դոհութիւն չպիտի պատճառէ։

ՆԵՐՔԻՆ

—

Ֆրանսական դեսպանը, դեսպանուհին եւ նորա քոյրը պատիւ ունեցան երկուշաբթի երեկոյ կայսերական պալատը ճաշելու։ Սեղանին ներկայ էին պալատական սպայք, Մեծ Եպարքոսն և արտաքին գործոց նախարարն, Վսեմ. Յարութիւն էֆէնտի Տատեան, Տիկինն և կայսերական Տիկնանոցի թարգման Օրիորդ Տատեան։ Ն. Վեհափառութիւն սիրալիր ընդունելութիւն ըրաւ հիւրերուն և Շէֆտաթի պատուանշանն ընծայեց Տիկին Նոյալի քրոջ։

— Դեսպանն ու դեսպանուհին յաջորդ օրն իրենց որդւոյն հետ Ֆրանսա ուղեւորեցան. կըսուի թէ Նոյալի մարքիզը Մատրիտի դեսպան պիտի անուանի։

— Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն սկսաւ պարբերական հանդէս մը հրատարակել։

— Թարիզ՝ կայսերական կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ Օսմանեան Ակադեմիայի մը հաստատութեան և օգուտներուն վրայ, և հրաւէր կը կարդայ անյապաղ ձեռնարկել անոր։

— Բարիզի քոլէրային պատճառաւ, Վառնայէն և Օտէսայէն եկող-չոգենաւք փոխանակ 5ի, 10 աւուր քարանթինայի պիտի ենթարկին այսուհետեւ։

— Հավալէ ունեցող անձինք պիտի փորձեն մի անգամ եւս կայսերական կառավարութեան դիմել, այս խնդրոյն կարգադրութեան համար։

— Նախարարաց խորհուրդն ի մօտոյ քննութեան պիտի առնու Թուրքիոյ երերուն պարտուց յարդարման օրինական ծրագիր մը, ինչպէս նաև ծրագիր մը տրոց դանձման եւ հսկողութեան (ժոնթրոլ) վերաբերեալ։ Այս երկու ծրագիրք իրր հիմ պիտի նկատուին յառաջիկայ ելմտական տարւոյ Պիւտճէին։

— Օգոստափառ Սուլթանն հաղուագիւտ թռչնոց և այլ կենդանեաց հաւաքածոյ մը նուէր ղրկած է Ռուսիոյ կենդանաբանական արքունի պարտիզին։

— Պալըքէսէրի մէջ տպարան եւ լրագիր մը պիտի հաստատուին։

— Ֆէնէրի Պատրիարքարանի վարչութեան աշխարհական չորս անդամոց տեղ, որոց պայմանաժամը լրացած էր, ընտրուեցան յունաց երեւելիներէն ուրիշ չորս անձինք։

ԱԶԳԱՅԻՆ

Թառն ժողովը չորեքշաբթի օրը հոգեւոր Տ. Ներսէս Ս. Պատրիարքի թաղման արարողութենէն յետոյ, ի նիստ դումարեցաւ Պատրիարքարանի մէջ եւ Տեղապահի ընտրութեան խնդրոյն զբաղելով, միաձայնութեամբ որոշեց որ Պատրիարքական Փոխանորդ Գեր. Ռուսմուզլեան հայրն, առանց Տեղապահի անունը կրելոյ, վարէ գործերը մինչեւ մէկ ամիս, յետ որոյ Պատրիարքական ընտրութիւն պիտի կատարուի։ Այս տնօրինութիւն յատուկ պաշտօնագրով այսօր կը ծանուցուի առ Բ. Դուռն։

— Տրապիզոնի ազգային գաւառական ժողովն անցեալ կիրակէ օր, 28 հոկտ. ի նիստ դումարուելով քուէից մեծամասնութեամբ գաւառական առաջնորդ ընտրեր է Գեր. Տ. Գարեգին Ծ. վարդապետ Սրուանձտեանցն։

— Էջմիածնայ Ս. Սինոդը պատրաստեր է՝ Հայրապետական նորոգ ընտրութեան համար Ռուսիոյ, Թուրքիոյ եւ այլ երկրաց առաջնորդական վիճակները զրկուելիք շրջաբերականներն, եւ ի մօտոյ պիտի ուղարկէ զայնս։

— Մայրաքաղաքիս բոլոր հայ եկեղեցեաց մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի վաղը, կիրակի, ի հանդիստ հոգւոյ երջանկայիշատակ Ներսէս Ս. Պատրիարքի։ Յաւակցական հեռագրեր կը հասնին Թուրքիոյ եւ օտար երկրաց հայաբնակ քաղաքներէն ի Պատրիարքարան։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՆ ՀԱՎԱՍ

ԱՆԳԼԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լոնտրա, 14 Նոյեմբեր

Լորտերու ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց ընտրական բարենորոգման վերաբերեալ ծրագիրը։

ԲՈԼԵՐԱՆ Ի ՅՐԱՆՍԱ

Փարիզ, 14 Նոյեմբեր, կէս գիշեր

Նախընթաց օրը (չորեքշաբթի) քոլերայէ մեռնող անձանց թիւն 81 ի կը հասնի։

Երէկ (հինգշաբթի) քոլերայէ մեռնող անձանց մինչեւ ցարդ ծանօթ թիւն 58 ի կը հասնի։

Երէկ 1 հոգի մեռաւ քոլերայէ ի Թուլոն։

ԲՈԼԵՐԱՆ Ի ՃԷԶԱՅԻՐ

Ալժէ, 13 Նոյմ. Ե.

Երէկ 2 հոգի մեռան քոլերայէ Օրան։

ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆԴԱ

Լոնտրա, 13 Նոյեմբեր

Պատրաստ մեռաղդրամ—

նուազում — անգլ. ոսկի	21,000
Պանքնոթք ի պահեստի — նուազում — անգլ. ոսկի	89,000
Փոխանակագիրք և այլ թղթեր յաւելում — անգլ. ոսկի	520,000

Պահեստի դրամոց համեմատութիւնն յանձնառութեանց հետ—35 3/4 %

ԱԶԴ

Հայ երիտասարդ մը որ այս շաբաթ վերադարձած է Բարիզէ, կը փափագի դասախօսութիւններ ընել աստ կամ ի գաւառս, Մաթէմաթիքայի ամեն ճիւղերուն և բնագիտութեան, և հայերէն ու ֆրանսերէն լեզուաց։ Ցիշեալ երիտասարդը մի քանի տարիներ Ս. Էջմիածնայ Գէորգեան Ճեմարանի մէջ պաշտօն վարած և վկայագիր ստացած է. յետ որոյ Բարիզ երթալով, անդ Սէն Լուիի Լիսէի մէջ կատարելագործած է իւր ուսումն, ի մասնաւորի Մաթէմաթիքայի, բնական գիտութեանց ճիւղերուն մէջ, և վկայականաւ Պոլիս վերադարձած է։

Փափագողք կրնան դիմել Արեւելքի խմբագրատունը։

ՋՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

Կը ծանուցանէ հասարակութեան թէ կարող պիտի լինի մեքենայով ջուր մատակարարել ի ԲԵՐԱ, ԿԱԼԱԹԱ և ՎՈՍՓՈՐԻ գիւղերը մինչև ԵԷՆԻՄԱՀԱԼԷ, 1884 տարւոյ լրանալէն առաջ։

Տեղեկութեանց և բաժանորդագրութեանց գրասենեակները կը գտնուին Բերա Թէբէ-Պաշի փողոց, թիւ 45, և Ղալաթիա Վոյվոտա փողոց, թիւ 14։

Բաժանորդագրութիւնք մէկ տարւոյ համար կը լինին և եռամսեայ կը վճարուին։

Կարելի է բաժանորդագրիլ հետագայ երեք կերպով.

1.—ԿՇՌԻ ՎՐԱՅ, որով տանը մէջ ջրամբար մը կամ ծորակ մը կը հաստատուի և 24 ժամը մի անգամ որոշեալ քանակութեամբ ջուր կը տրուի։ Օրը 165 օխայ ջրի համար եռամսեին նուազագոյն դինն է 62 1/2 ղրուշ ոսկի դրամ։

2.—ՀԱՇԻՈՅ ՎՐԱՅ, տրուած ջուրին քանակութիւնը կը չափուի մասնաւոր գործիքով և իւրաքանչիւր խորանարդ մէդր ջուրի (1000 օխա) համար կը վճարուի 4 ղրուշ ոսկի դրամ։ Այս դին բարձրագոյնն է. աւելի մեծ քանակութեամբ ջուր ոսպառող բաժանորդաց համար դիները երթալով կը նուազին։ Օրը 165 օխայ ջրի համար եռամսեին նուազագոյն դինն է 62 1/2 ղրշ. ոսկի դրամ։

3.—ԸՍՏ ՀԱՃՈՅՍ (այլեայլ մասնաւոր պարագայից մէջ)։ Այս եղանակ բաժանորդագրութեամբ, տրուած ջուրին քանակութիւնը չհաշուիր, այլ կը չափուի և կը վճարուի տան բնակչաց թիւոյն համեմատ։

Վեց անձանց համար եռամսեի դինն է 75 ղրուշ ոսկի դրամ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՔ

Խողովակները, ջուրին քանակութիւնը չափող գործիքը և ասոնց համար տան մէջ հարկ եղած այլեայլ շինութիւնները բաժանորդին հաշոյն են։

Եթէ բաժանորդք ուզեն, Ընկերութիւնը կրնայ դիւրութիւններ ընձեռել իրենց՝ վարձու տալով խողովակները կամ չափող գործիքը, և կամ ծախուց մաս առ մաս վճարումն ընդունելով։ Բաց ասոնք, բաժանորդը ազատ է իւր տան մէջ արդէն գտնուած շինութիւնները գործածել։

Ընկերութեան, ինչպէս նաև Թաղապետական շրջանակներու դրասենեկաց մէջ կը գտնուին պայմանագրութեան օրինակներ թուրքերէն, ֆրանսերէն, հայերէն և յունարէն լեզուաւ։

Բաժանորդ դրուիլ ուզող անձինք կրնան թղթատարական տոմս մը ղրկել առ,

Մ. ԲԷՌԻ
Ընդհանուր տնօրէն

Կամ առ Տնօրէնութիւնն, Թէրէ—Պաշի փողոց թիւ 45։

Ցառաջիկայ Դեկտեմբեր 31ին տեղի պիտի ունենայ ի Փարիզ Ճարտարարագործութեան Պալատին մէջ, ՖՐԱՆՍԱՅԻ ԶԱՐԴԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ վերջնական վիճակահանութիւնը, որոյ մէջ կը գտնուի ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐ ՖՐԱՆԳԻ հռչակաւոր Ոսկի բաժին, ինչպէս նաև հետեւեալ 105 բաժինները.— 1 բաժին՝ 100,000 ֆրանքի, 1 բաժին՝ 50 հազար ֆրանքի, 2 բաժին՝ 25,000 ֆրանքի, 1 բաժին՝ 10,000 ֆրանքի, 20 բաժին՝ 1,000 ֆրանքի և 80 բաժին՝ 500 ֆրանքի։ Այս բոլոր բաժինները վճարելի են ֆրանսայի Պանքայէն։

ՏՈՄՍԻՆ ԳԻՆՆ Է ՄԻԿ ՖՐԱՆՔ

Ուրիշ ոչ է վիճակահանութիւն մինչև ցարդ այսքան մեծ առաւելութիւններ ընձեռած է, և հասարակութիւնն այս վերջին անգամ է որ այսչափ կարեւոր վիճակահանութեան մը պիտի մասնակցի, որովհետև Ֆրանսական Խորհրդարանն ի մօտոյ պիտի որոշէ որ այսուհետև վիճակահանութիւնք 50 հազար ֆրանքի դրամագլխէն անդին չանցնին։

Տոմսերը կը ղրկուին ի փոխարէն Պանքնոթներու, Չէքերու, Թղթատարական փոխանակագրերու (մանդատ—բոթի), ի հրամանի Պ. Հէնրի Սվընէլի, Տնօրէն Վիճակահանութեան, Փարիզ, Ճարտարագործութեան Պալատն։

GRANDS MAGASINS DU

Printemps

NOUVEAUTÉS

PARIS

Vient de Paraître

le magnifique Catalogue général illustré, contenant plus de 450 Gravures des nouveaux Modèles pour la Saison

Hiver 1884-85

Envoi gratis et franco sur demande affranchie adressée à

MM. JULES JALUZOT & Cie

PARIS

Sont également envoyés FRANCO, les échantillons de tous les tissus composant les immenses assortiments du Printemps.

Expéditions dans tous les Pays du Monde.

Շատ տարիներէ ի վեր Ազգային նշանաւոր վարժարանաց մէջ պաշտօն վարող հմուտ և փորձառու վիպասէր կաւավարիչ մը կը փափաղի թէ մասնաւոր և թէ Ազգային վարժարանաց մէջ պաշտօն վարել։ Մանրամասն տեղեկութեանց համար դիմել Բոլսոյ Մանկանոցի խմբագրատունը, Պոլիս, Իսկի Զապթիյէ Ճառատէսի թիւ 63։

Արտօնատէր Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

ՈՒՍՆՈՏՈՒԹԻՒՆ

ՄԿՆԱՁԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՁՂԱՁԳՈՒԹԻՒՆ

Բոլորովին կը բուժին իմ դրութեամբս

Ստակը կ'ընդունուի փորձն յաջողապէս կատարուելէ յետոյ։

Բժշկութիւն թղթակցութեամբ

ՈՒՍՈՒՑԻՉ ՏՐ. ԱԼՊԷՐ

Ֆրանսական Գիտական ընկերութենէն պատուեալ առաջին կարգի ոսկեայ շքադրամով, վասն արժանեաց։

6, Բլաս տիւ Թրոն, Փարիզ

Ամեն անոնց որք կը տառապին լուսնապտուութեամբ, դանդաղ կաթկամութեամբ և ջղային ցաւերով, կը յանձնարարենք Տօքթոր Ալպէրի տիեղերահռչակ և դրեթէ հրաշալի դրութիւնը։ Ուրեմն բոլոր հիւանդներն ամենայն վստահութեամբ դիմեն Տօքթոր Ալպէրի, Փարիզ, Բլաս տիւ Թրոն, 6, և անոնցմէ շատեր պիտի գտնեն իրենց առողջութիւնը զոր ձեռք բերելէ յուսահատած էին։ Բժշկութիւն թղթակցութեամբ, հիւանդութեան մանրամասն պատմութիւնն հաղորդելէ յետոյ։ Տօքթոր Ալպէր դրամ կ'ընդունի լաւ արդիւնքներ տեսնուելէ յետոյ միայն։

ԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Բոլորովին կը բժշկուին իմ դրութեամբս, հիմնեալ գիտական նոր խուզարկութեանց վրայ, նոյն իսկ ամենէն աւելի յուսահատ պարագայից մէջ, առանց երբէք խանգարելու գործարանները։ Նմանապէս կը բժշկեմ Էրեկտասպերմիան մեղաց, Ջղաշիջութեանց և անկարողութեանց տխուր հետեւանքները։

Գաղտնապահութիւն երաշխաւորեալ

Կը խնդրուի հիւանդութեան ճիշդ նկարագրութիւնը ղրկել։

ՏՈՔԹՈՐ ՊԷԼԼԱ

Անդամ բազմաթիւ Գիտական ընկերութեանց

6, Բլաս տը լա Նասիոն Փարիզ